Ազգ
Azg
29 ԱՊՐԻԼ 2012 ԿԻՐԱԿԻ 78(4930)
ISSN: 1829-1651

# Հակառակորդի գնդակից ժամկետային զինծառայող է զոհվել

ԼՂՀ ՊԲ-ից հաղորդում են, որ ՊԲ զորամասերից մեկի մարտական դիրքում արձանագրվել է հրազենային զենքից մահացու վիրավորման դեպք: Զոհվել է նույն զորամասի ժամկետային զինծառայող շարքային Հովհաննես Նիկողոսյանը: Փաստի առթիվ կատարվում է նախաքննություն:

ԼՂՀ ՊԲ-ից նաեւ տեղեկացնում են, որ անցնող շաբաթվա ընթացքում ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում հակառակորդը հրադադարի պահպանման ռեժիմը խախտել է 500 անգամ: Հայկական դիրքապահների ուղղությամբ արձակվել է ավելի քան 2600 կրակոց: Միայն ապրիլի 23-ին եւ 24-ին հակառակորդը հրադադարի ռեժիմը խախտել է 220 անգամ՝ արձակելով 1300 կրակոց: ՊԲ առաջապահ զորամասերը զերծ են մնացել հակառակորդի հրահրիչ գործողություններին պատասխանելուց եւ մարտագծի ողջ երկարությամբ վստահորեն իրականացրել են մարտական հերթապահություն:

Հիշեցնենք, որ ապրիլի 24-ին ադրբեջանա-ղարաբաղյան շփման գծում հակառակորդը կրակ էր բացել սանիտարական մեքենայի վրա, երկու պայմանագրային զինծառայողներ վիրավորվել էին:

Վերջին օրերի սահմանին հակառակորդի գնդակից արձանագրված զոհերի առնչությամբ երեկ հայտարարություն է տարածել ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ շեշտելով, որ իրենց արձագանքը մեկն է լինելու. «ՀՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանն արդեն հավաստիացրել է, որ հակառակորդն անպատիժ չի մնալու: Ուստի, ՀՀ զինված ուժերը շփման գծի ամբողջ երկայնքով, չենթարկվելով հակառակորդի սադրանքին, իրականացնելու են իրավիճակին համարժեք գործողություններ»:

Հ. Հ.

# Բավական է, ժամանակն է Ադրբեջանին լրջորեն զգուշացնելու...

## *Կամ գուցե պարտադրելու խաղաղություն, ինչն ամենայն պատրաստակամությամբ արվում է շատ այլ դեպքերում*

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եթե միջազգային քաղաքականությունը սահմանափակվում է միայն նավթա-գազային շահերով, իսկ մնացյալի դեպքում նախընտրելի է դառնում կա՛մ ջայլամի կեցվածքը, կա՛մ անողնաշար պահվածքը՝ ակնհայտ է դառնում, որ այս աշխարհի հիմքերը օգուտից բացի ուրիշ ոչ մի բանի վրա չեն հենվում:

Երբ ինչ-ինչ երկրների շահերին սկսեցին հակասել նրանք, ում, օրինակ, միջերկրածովյան տարածքում նույն այդ ուժերը ժամանակին գահին էին նստեցրել, երկար չտեւեց, մինչեւ արաբական գարունը մաքրեց-տարավ գահակալների հետքերը ու, ի զարմանս գահընկեց անողների, ալիքի գագաթին բերեց բնավ էլ ոչ ցանկալի ուժերի: Սակայն նույն այդ գերտերություններն ու ամեն տեղ շահեր պաշտպանողներն են, որ բոլորից բարձր գոռում են ժողովրդավարության մասին ու մյուսներից էլ ժողովրդավար լինել են պահանջում:

Է, եթե պահանջում եք, ինչո՞ւ հետեւողական չեք լինում, այլ հարմար առիթի դեպքում չբավարարված պահանջների փոխարեն գրպան լցնելու դիվիդենտներ եք հավաքում: Բաքվի հետ աշխարհի մոտեցումների գերակշիռ մասում չկա մի խնդիր կամ երեւույթ, որ տարանջատվի կասպյան ավազանի էներգակիրների հարցից, որ դիտարկվի այնպես, ինչպես մատուցվում է:

*Տես էջ 2*

# «Exit-poll-ի դեպքում «վախ» ասվածը հետխորհրդային միֆ է»

## *Կողմնորոշումը դեպի ՀՀԿ եւ ԲՀԿ անում է՝ «տեղ թողնելով» նաեւ ՕԵԿ-ին, ՀԱԿ-ին, ՀՅԴ-ին ու «անցողիկ» շեմին տատանվող «Ժառանգությանը»*

**Պարտադիր չէ, որ ընտրությունների առնչությամբ սոցիոլոգիական հարցումների եւ քվեարկության արդյունքների համընկնումը նշանակի, թե գործընթացը տեղի է ունեցել առանց մեքենայությունների ու կեղծիքների: Եվ դա այն պատճառով, որ հարցումներն անցկացվում են քվեարկության օրից ամենաուշը 1-2 շաբաթ առաջ:**

**«Ազգի» հարցին, թե որքանով կարող է սոցհարցումների եւ քվեարկության արդյունքների համընկնումը ընտրությունների արդար լինելու ցուցանիշ լինել, «Արմնյուզ» հեռուստաալիքի պատվերով արդեն երկրորդ նախընտրական հարցումը Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի հետ անցկացնող The Gallup Organization-ի ներկայացուցիչ Ռաիսա Ալիշաուսկենեն երեկ ասուլիսում պարզաբանեց, որ քարոզարշավի հիմնական շեշտադրումներն արվում են հենց վերջին շաբաթներում, ինչը կարող է էականորեն ազդել քվեարկության արդյունքների վրա, այդպիսով նաեւ տարբերություն ապահովելով սոցհարցումների տվյալների համեմատությամբ:**




*Տես էջ 2*

# Օմբուդսմենը կոչ է անում չխուսափել ՄԻՊ գրասենյակ դիմելուց

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն առաջիկա խորհրդարանական ընտրությունների առնչությամբ շուրջ 30 ահազանգ է ստացել, որն օմբուդսմեն **Կարեն Անդրեասյանի** կարծիքով, սակայն, չի արտահայտում նախընտրական ամբողջական պատկերը: Հետեւաբար, օմբուդսմենը դիմում է քաղաքացիներին ավելի ակտիվ լինելու խնդրով եւ նշում, որ խախտումներ նկատելու դեպքում զանգահարեն ՄԻՊ գրասենյակի թեժ գծին՝ 116 հեռախոսահամարով:

Զանգահարելով 116 հեռախոսահամարին՝ քաղաքացին կարող է միանալ արագ արձագանքման ծառայությանն ու հայտնել իր դժգոհությունը կամ դիտարկումները: 116 համարին զանգահարելն անվճար է ինչպես քաղաքային, այնպես էլ բջջային հեռախոսներից: Կարեն Անդրեասյանը նշում է՝ երկիրը ժողովրդավար է դառնում հենց քաղաքացիների ակտիվության շնորհիվ, ուստի մեր քաղաքացիները նույնպես պետք է ակտիվ լինեն եւ չխուսափեն ՄԻՊ գրասենյակին դիմելուց: Իսկ առ այսօր ստացված դժգոհությունները հիմնականում վերաբերել են ընտրակաշառքներին, ցուցակների անճշտությանն ու նախընտրական պաստառների պատառոտմանը:

Երեկ «Տեսակետ» ակումբում՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Կարեն Անդրեասյանը հավաստիացրեց՝ եթե քաղաքացին դիմում է ՄԻՊ գրասենյակ, ապա նրա անվան գաղտնիությունը լինում է ապահովված, բայց միաժամանակ կարեւոր է, որ գրասենյակը ինֆորմացիան ստանա հենց առաջին, ոչ թե միջնորդավորված աղբյուրներից:

Ստանալով խախտումների վերաբերյալ ինֆորմացիա՝ ՄԻՊ գրասենյակը դիմում է ոստիկանություն, որպեսզի վերջինս սկսի հետաքննություն, բացի դրանից՝ հետաքննության ընթացքում գրասենյակը հետեւում է ոստիկանության ու դատախազության աշխատանքներին: «Քանի որ ինքներս հետաքննություն իրականացնող մարմին չենք», հավելում է օմբուդսմենը:

Իսկ կոնկրետ գնահատականներ նախընտրական շրջանի վերաբերյալ Կարեն Անդրեասյանը չի տալիս՝ չցանկանալով քաղաքականության մաս կազմել:

ՄԻՊ գրասենյակն ավելի կոնկրետ գնահատականներ կտա միայն ընտրություններից հետո:

Ի. Պ.

# Թուրքիան սկսել է նավթ եւ գազ որոնել Կիպրոսում

Թուրքական Turkish Petroleum պետական ընկերությունը նավթի ու գազի որոնմանն ուղղված հետախուզական հորատում է սկսել Հյուսիսային Կիպրոսում: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ այդ առիթով կազմակերպված արարողությանը մասնակցել են Թուրքիայի էներգետիկայի նախարար Թաներ Յըլդըզը եւ կիպրացի թուրքերի առաջնորդ Դերվիշ Էրօղլուն:

Սպասվում է, որ հետախուզման աշխատանքները կտեւեն 3-6 ամիս: Հորանցքերի խորությունը կհասնի 3 հազար մետրի:

Կիպրոսի Հանրապետության ղեկավարությունը զայրացած է թուրքերի այդ գործողությունից: Կառավարության ներկայացուցիչ Ստեֆանոս Ստեֆանուն հայտարարել է, որ առանց կղզու միջազգայնորեն ճանաչված իշխանությունների հետ համաձայնեցնելու Կիպրոսում հորանցքեր փորելը ապօրինություն է:

1974 թ. Թուրքիան զավթեց Կիպրոսի տարածքի մոտ 1/3-ը: Վերջին տարիներին կղզին եւ ամբողջ Արեւելյան Միջերկրածովքը սկսել են համարել ածխաջրածիններով հարուստ շրջան: Անցյալ տարի Կիպրոսի կառավարությունը սկսեց հորանքեր փորել կղզու շրջակա ծանծաղուտում, հարուցելով Թուրքիայի դժգոհությունը:

Կիպրոսի կառավարության վարձած ամերիկյան Noble Energy ընկերությունը 2011-ին հաղորդեց բնական գազի խոշոր հանքավայրի հայտնաբերման մասին: Դրա ենթադրյալ պաշարները 224 մլրդ խմ են: Հանքավայրը գտնվում է Կիպրոսի բացառիկ տնտեսական գոտում:

Պ. Ք.

# Ամեն օր վտանգավոր ճանապարհով անցնող զինվորն անզե՞ն

**Նախորդ գիշերն Այգեպարում էլի կրակել են, գյուղում վախի մթնոլորտ է, մարդիկ վախենում են ցերեկը դաշտ գնալ, վարուցանքը տուժում է: Առհասարակ, Տավուշի սահմանից եւ Ղարաբաղից ստացվող լուրերը վերջին օրերին նմանվում են պատերազմական ժամանակի տեղեկագրերի՝ գնդակոծումներ, դիվերսիա, զոհեր: Արդյոք Իլհա՞մն է պատերազմ խաղարկում եւ ի՞նչ նպատակով: Ինչ նպատակով էլ լինի՝ մերոնք համարժեք պատասխան են խոստանում: Թեեւ՝ ուշացնում են, չուշացնեն էլ՝ հարցերը ծագում են ու պատասխան են ուզում:**

**Ամեն օր վտանգի տակ եղած ճանապարհով տեղափոխվող զինծառայողն ինչպե՞ս կարող է զինված չլինել (համենայն դեպս՝ մամուլ այդպիսի լուրեր են թափանցել):**

**Ամեն օր վտանգված ճանապարհ ու դիրքեր ունեցող մեր սահմանապահի ուշադրությունը որտե՞ղ է, որ հանկարծ ու հակառակորդի դիվերսիոն խումբ կարող է անցնել եւ մահացու վնաս հասցնել (այս լուրն էլ է մամուլից, ու դեռ դա ոչ ոք չի հերքել): Առիթ բաց չենք թողնում, մենք էլ ձեզ հետ կրկնում ենք՝ մեր բանակը տարածաշրջանի ամենամարտունակ բանակն է, բա ամենամարտունակ բանակի զինվորը, սահմանը թքի տակ, ինչու պիտի մինչեւ ատամները զինված չլինի ու իր քեֆին գիշերով ճամփա կտրի, ոնց է եղել, որ հսկողը չի հսկել ու կատարվածը չի կանխել: Դիվերսիոն խումբ էլ լինի, դրանց վնասազերծողն ո՞ւր էր ու ինչո՞ւ իր բարձրության վրա չէր:**

**Հարցեր, որոնք ծագում են ցավալի լուրն առնելուց հետո, բայց որոնց հետամուտ չեն «գլուխները խառը» մեր ողջ քաղաքական ու վարչական գլուխները:**

**Մերոնց գլուխը խառն է, մերոնք զոռը տվել են քարոզարշավի հեռուստաժամանակը հնարավորինս օգտագործելուն՝ ամեն մեկը մի քանի հազար ռոպե ճառ է ասել ու հազար-հազար խոստում տվել: Ցավալին այն է, որ սահմանային անհանգիստ իրավիճակը բոլորովին անդրդվելի է թողել հատկապես մեր քաղաքական ուժերին՝ քարոզչական առավ-փախավի մեջ նրանցից ոչ մեկը հարկ չի համարում քաղաքական գնահատական տալ հարեւան ագրեսորի պահվածքին, բոլորով միասին խորացել են միմյանց վրա կեղտ ու «անանիմկա» թափելու մեջ: Երեկվա լրահոսում փնտրեցի ընտրությունների մասնակից ինը ուժերի երեւելի ներկայացուցիչների որեւէ գնահատական, մտահոգություն կամ էմոցիա՝ ուղղված հայ զինվորների կյանքը խլող հակառակորդի պահվածքին ու չգտա (ֆեյսբուքը հանած), Հայաստանի նախագահի նախորդ օրվա խոսքից բացի: Սրա՞նք են հավակնում մեր պետական այրերը դառնալ: Առիթից առիթ կուսակցական լոլոներ են կարդում Ադրբեջան-Թուրքիա թեմայով, անհասցե հոխորտում, հիմա ինչո՞ւ լռեցին, թե՞ էնքան են զբաղված իրենց տեղի խնդիրն արեւի տակ ապահովելով, որ գլուխ չունեն հակառակորդի սադրանքներից խոսելու ու մի խելացի առաջարկ հնչեցնելու, ժամանակ չունեն հայ զինվորների կյանքեր խլած հանգամանքներով հետաքրքրվելու: Խոսքը ժամանակին եւ անմիջապես արձագանքի մասին է**

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Զորամասերում զգալիորեն նվազել են թոքախտի դեպքերը, ավելացել շնչառական հիվանդությունները

Ի տարբերություն նախորդ տարիների, այս տարի զորամասերում ավելացել են սուր շնչառական հիվանդությունները։ Դրանք հատկապես շատ էին դեկտեմբերից փետրվար ժամանակահատվածում։ Պատճառը ցուրտ եղանակն էր։ Եթե շնչառական հիվանդությունները ակտիվանում են հատկապես ցուրտ եղանակներին, ապա տարվա այս եղանակից սկսած մինչեւ հոկտեմբեր ամիս շատանում են ինֆեկցիոն երեւույթները։ Ճնշման տատանում, գլխացավ, ատամնացավ, ստամոքսային տրակտի հիվանդություններ։ Սրանք այն հիմնական հիվանդություններն են, որոնցից բողոքում են զինվորները։ «Նրանց բոլորին տրվում է անհրաժեշտ ու համապատասխան բժշկական օգնություն»։ Ներկայացված տեղեկատվությունը Ստեփանակերտի զինվորական հոսպիտալի պետ, փոխգնդապետ **Հրաչ Եգորյանինն** է, հավաստիացումը՝ նույնպես։ Զորամասերում հաճախակի հանդիպում են նաեւ ջրի հետ կապված խանգարումներ։ Սակայն խնդիրը ոչ թե միկրոբներն են, այլ ջրի աղային կազմի տարբերությունը։ «Զորամասի տարածքի ջրի աղային բովանդակությունը որոշակիորեն տարբերվում է այն ջրից, որը քաղաքացիական կյանքում օգտագործել են զինվորները, եւ որին սովորել է նրանց ստամոքսը», ասում է փոխգնդապետը՝ հավաստիացնելով, որ ջրի որակն անընդհատ ստուգվում է՝ վարակներից զերծ մնալու համար։ Հստակ թիվ չնշելով՝ փոխգնդապետը հավելում է, որ հիվանդների թիվը սովորական է, այնքան, որքան եղել է մնացած տարիներին կամ տարվա մյուս ամիսներին։ Հոսպիտալի պետի խոսքերով՝ եթե տարիներ առաջ թոքախտով հիվանդների թիվը զգալի էր, ապա վերջին տասը տարում կրճատվել է մի քանի անգամ։ Նույն վիճակն է նաեւ դիզինտերիա եւ հեպատիտ հիվանդությունների պարագայում։ Եգորյանը դա բացատրում է զինվորների կենցաղային պայմանների, թիկունքային ապահովման, սննդի ու ջրի որակի բարելավմամբ։ Մյուս հոսպիտալների բուժանձնակազմի մասին խոսել եւ նրանց կատարած աշխատանքին գնահատականներ տալուց Եգորյանը խուսափեց՝ շեշտելով, որ իր ղեկավարած կառույցում բուժանձնակազմի մեղքով մահացության դեպքեր չեն գրանցվել։ Ինչ վերաբերում է նախորդ տարվա համեմատ վիրավորների թվի աճին՝ նրա պատասխանը խուսափողական էր. «Զգալի աճ չէի ասի, դե ինձանից լավ գիտեք»։ Միջանձնային հարաբերությունների հետեւանքով հոսպիտալ տեղափոխված զինվորների թվի վերաբերյալ պատասխանն էլ նույն ժանրից էր. «Կան, բայց շատ չեն»։ Եգորյանը հավաստիացնում է, որ հոսպիտալը ոչ միայն բուժանձնակազմի եւ սարքավորումների, այլեւ դեղորայքի խնդիրներ չունի։ «Դեղորայքը հասանելի է զինվորներին։ Գնացե՛ք պահեստ եւ տեսե՛ք, որ ունենք դեղեր, եւ դրանք հասանելի են զինվորներին»։ «**Ազգ**»-ի դիտարկմանը, թե ինչո՞ւ է անգամ գլխացավի կամ ատամնացավի դեպքում զինվորը տնից դեղ խնդրում, Եգորյանը հավելեց, որ զինվորները հեռախոսազրույցի ընթացքում պատմում են այս կամ այն խնդրի մասին, «Դե ծնողն էլ մտահոգվում է, երեխային ուղարկում է դեղեր, ընդամենը»։



**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ստեփանակերտ-Երեւան**

***Հ. Գ.*** *Հոսպիտալի միջանցքում նկատեցինք փոխգնդապետ Եգորյանի եւ նախարար Մովսես Հակոբյանի բջջային հեռախոսահամարները։ Նրանք հավաստիացրին, որ միշտ հասանելի են, օրական բազմաթիվ հեռախոսազանգեր են ստանում, եթե փոխգնդապետին զանգահարում են հիմնականում ծնողները, հետաքրքրվում, թե որդին ինչ խնդիր ունի կամ ինչի կարիք է զգում, ապա նախարարին հիմնականում զանգահարում են զինվորներն ու խնդրում արձակուրդ։ Նախարարի պատասխանը մեկն է՝ նախարարը զինվորների արձակուրդների բաշխմամբ չի զբաղվում. դրա համար գոյություն ունի զորամասի հրամանատարություն։*



# «Exit-poll-ի դեպքում «վախ» ասվածը հետխորհրդային միֆ է»

*1-ին էջից*

Ըստ Ալիշաուսկենեի, տարօրինակ կլինի, եթե լրիվ համընկնում լինի, քանի որ ընտրողների մոտ 15-20 տոկոսն իր ընտրությունը կատարում է քարոզարշավի վերջին շաբաթում, անգամ հենց քվեարկության օրը։ «Տարօրինակ կլինի նաեւ, եթե սոցհարցման տվյալները տրամագծորեն տարբերվեն քվեարկության արդյունքներից», ասաց The Gallup Organization-ի ներկայացուցիչը։ Նրա խոսքերով, վատ է, երբ քվեարկությունից անմիջապես հետո անցկացվող exit-poll-ի տվյալները չեն համապատասխանում քվեարկության արդյունքներին։

«**Ազգի**» հարցին, թե exit-poll-ի դեպքում էլ չի կարող ազդել ընտրության մասին հայտնելու վախի գործոնը, Ալիշաուսկենեն արձագանքեց, որ այդ պատկերացումը հետխորհրդային միֆ է։ «Այդ «վախի գործոն» ասվածի տակ հաճախ թաքնվում են, երբ ոչ պրոֆեսիոնալ են անցկացնում exit-poll-ը», վստահեցրեց Ալիշաուսկենեն, ավելացնելով, որ Հայաստանում մարդիկ հաստատապես ավելի շատ չեն վախենում, քան, ասենք, այլ հետխորհրդային երկրում կամ Եվրոպայում։

Ինչեւէ, ապրիլի 16-22-ը Հայաստանի չափահաս 1015 բնակիչների շրջանում արված հարցման արդյունքներով, քվեարկությունից երկու շաբաթ առաջ առավել մեծ աջակցություն են վայելում ՀՀԿ-ն, որին պատրաստ է ձայն տալ հարցվածների 39 տոկոսը, եւ ԲՀԿ-ն՝ համապատասխանաբար 26 տոկոսը։ Ապրիլի 4-10 անցկացված առաջին հարցման արդյունքների համեմատությամբ, ՀՀԿ ձայներն ավելացել են 5 տոկոսով, ԲՀԿ-ինը՝ պակասել 2 տոկոսով։ ՀԱԿ կուսակցությունների դաշինքը, ՕԵԿ-ն ու ՀՅԴ-ն, ըստ հարցման, «գրեթե վստահաբար» կարող են անցնել Ազգային ժողով, իսկ «Ժառանգությունը» տատանվում է «անցողիկ» շեմին։

Ինչ վերաբերում է ընտրությունների հանդեպ հետաքրքրությանը, ապա հարցվածների 66 տոկոսը «հաստատ ընտրելու է», 23 տոկոսը «հավանաբար կընտրի»։ Ալիշաուսկենեն հատուկ շեշտեց, որ հարցմանը մասնակցում են Հայաստանում գտնվող անձինք այն դեպքում, երբ ընտրացուցակներում են նաեւ գրանցված, բայց երկրից բացակայողները, դրա համար էլ ընտրություններին մասնակցողների վերջնական թվաքանակը սովորաբար ավելի ցածր է լինում, քան հարցման դեպքում։

«Հայաստանում գործերը ընթանում են ճիշտ» ձեւակերպմանը համաձայնել է հարցվածների 50 տոկոսը, 41-ը՝ համաձայն չէ։ Ըստ կուսակցությունների աջակիցների, առավելապես «ճիշտ» լինելուն համաձայն են ՀՀԿ (75 տոկոս), ԲՀԿ (52 տոկոս) եւ ՕԵԿ (42 տոկոս) աջակիցները՝ «Ժառանգության» աջակիցների՝ 7-տոկոսանոց ամենացածր համաձայնությամբ։ Հայաստանի առջեւ ծառացած հիմնական խնդիր են հարցմամբ նշվել գործազրկությունը, սոցիալական վիճակը, ցածր աշխատավարձը։

Հետաքրքրական է, որ առաջին հարցումից մինչեւ երկրորդը քիչ նվազել է քաղաքական տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուր՝ հեռուստատեսության նշանակությունը՝ 96 տոկոսից դառնալով 93, երբ մեծացել է ինտերնետի (26-ից հասել է 30 տոկոսի) եւ բարեկամ-ընկերների տված տեղեկությունների բաժինը (31-ից 33 տոկոս)։ Ըստ հարցման ավելացել է նաեւ այն ընտրողների թիվը, ովքեր գտնում են, որ ընտրությունները կլինեն ազատ եւ արդար՝ նախկին 36 տոկոսի փոխարեն կազմելով 38 տոկոս, ընդ որում, ընտրությունների ազատ եւ արդար լինելու հարցում համոզված չէ հարցվածների 53 տոկոսը՝ նախկին 56-ի փոխարեն։ Նույն ցուցանիշն ըստ կուսակցությունների աջակիցների մեծապես տատանվում է. այն դեպքում, երբ ՀՀԿ ընտրազանգվածից 57 տոկոսը համոզված է ընտրությունների արդար ու ազատ լինելու մեջ, ԲՀԿ եւ ՕԵԿ-ի դեպքում 35-տոկոսանոց հատվածով, ապա «Ժառանգության» ու ՀԱԿ աջակիցների թվում համապատասխանաբար 14 եւ 21 տոկոսն է համոզված, թե ընտրությունները կլինեն ազատ եւ արդար։

Առաջին եւ երկրորդ հարցումների արդյունքներով հայաստանցիները մնում են «ընդգծված եվրոպական» կողմնորոշմամբ։ Հարցվածների 69 տոկոսը նշել է, որ Հայաստանն ապագայում պետք է անդամակցի Եվրոմիությանը, միաժամանակ, 80 տոկոսն էլ ցանկանում է, որ մնանք ԱՊՀ կազմում։

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Բավական է, ժամանակն է Ադրբեջանին լրջորեն զգուշացնելու...

*1-ին էջից*

**Ու քավոք, եզակի անգամ չէ, երբ Բաքվի կողմից սադրանքներն ու ոտնձգությունները ստորադասվում են անդրկասպյան ու էլ Աստված գիտի ինչ տարանցման ուղիների շուրջը պտտվող շահերին։**

**Արդեն քանի օր Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծի տարբեր հատվածներում ադրբեջանական զինուժը սադրանքների է գնում, զոհվում են հայ զինծառայողներ, սակայն աշխարհի ականջն էլ է խուլ, աչքն էլ՝ կույր, իսկ որեւէ կերպ արձագանքն էլ նման է հոգնած դժգոհության, այլ ոչ դատապարտումի։ Մինչդեռ դատապարտելու ձեւակերպումներն օգտագործվում են ամենայն առատությամբ, սակայն, ինչպես ասում են, մեջը բան չկա։**

**ԵԱՀԿ Մինսկի խումբն էլ, աշխարհի մի հատվածը ներկայացնելով ու առանձնակի տարբեր կեցվածք չունենալով, վերջին օրերի սպանություններին ու զինադադարի խախտումներին արձագանքել է առանց հասցեատեր նշելու, այդպիսով շարունակական դարձնելով ադրբեջանական կողմի՝ միջազգային հանրության մակարդակով անպատիժ մնացող ու լկտի պահվածքը։**

**Մինսկի խմբի համանախագահները Դուբլինում ապրիլի 27-ին հանդես են եկել հայտարարությամբ՝ անդրադառնալով շփման գծի միջադեպերին, իսկ համանախագահները Դուբլինում էին՝ մասնակցելու ԵԱՀԿ-ում ներկայումս նախագահող Իռլանդիայի նախաձեռնած՝ ԵԱՀԿ տարածքի հակամարտությունները Հյուսիսային Իռլանդիայի օրինակով քննարկելու կոնֆերանսին։ Իգոր Պոպովը, Ռոբերտ Բրադկեն եւ Ժակ Ֆորը «խորին մտահոգություն» են հայտնել զոհերի ու վիրավորների պատճառ դարձած Հայաստան-Ադրբեջան սահմանի ու շփման գծի զինադադարի խախտումների առնչությամբ։**

**«Այսպիսի անիմաստ գործողությունները խախտում են ուժի կիրառումից խուսափելու եւ հակամարտության խաղաղ կարգավորում փնտրելու կողմերի պարտավորությունը եւ հակասում են 2012-ի հունվարի 23-ի Մեդվեդեւ-Սարգսյան-Ալիեւ համատեղ հայտարարության ոգուն», ասվում է հայտարարության մեջ, առանց այլեւայլության օգտագործելով «կողմեր» բառը այն դեպքում, երբ գոյություն ունի կոնկրետ կողմ։ «Հակամարտությունը չունի այլընտրանք, բացի բանակցված խաղաղ կարգավորումից» տողն էլ հայտարարության մեջ արդեն ձեւականի ոլորտից է, քանի որ քանիցս կրկնվում է, սակայն արժանանում ադրբեջանական կողմի արհամարհանքին։**

**Արդեն իսկ տասնամյակներ ձգվող կարգավորման ներկայիս ընթացքը հրամայական է դարձնում, որ միջադեպերն ու տարբեր քայլերը ունենան կոնկրետ հասցեատիրոջն ուղղված մտահոգությունների ու դատապարտումի զգուշացումներ, այլ ոչ զուտ բոլորին ուղղվող ընդհանրական ձեւակերպումներ։**


## Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է մրցույթ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար

**1. Ռեժիսուրայի ամբիոն**
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր

***Ծանոթություն.***
Հավակնորդները համալսարանի գիտական քարտուղարին են ներկայացնում.

▼ դիմում ռեկտորին,
▼ կադրերի հաշվառման անհատական թերթիկ,
▼ քաղվածք աշխատանքային գրքույկից,
▼ համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական տեսքով,
▼ բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
▼ գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
▼ տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
▼ տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 30 օր, սույն հայտարարության հրապարակման օրվանից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել համալսարանի գիտական քարտուղարին:

Հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 17, N 301 սենյակ, հեռ. 59 70 28:

**ՌԵԿՏՈՐԱՏ**



«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի



Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի։
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում։
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում։



"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Դավիթ Հարությունյան. Ընտրողների ցուցակներում անճշտություններ չկան

Խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած 6 կուսակցություններ՝ ՀՀԿ, ՀՅԴ, Դեմկուս, Կոմկուս, ՕԵԿ եւ ԲՀԿ, ուսումնասիրել են Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերից օգտագործվող սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի տեխնիկական հնարավորությունները ու դիմել ԱԱԾ-ին առաջարկությամբ՝ մայիսի 6-ից մինչեւ ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու մասին ընտրական հանձնաժողով դիմում ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը ընձեռել նշված կուսակցությունների մեկական ներկայացուցչի ՍԷԿՏ համակարգից օգտվելու հնարավորություն՝ ստուգելով իրենց տեղեկություններով քվեարկության մասնակցած այս կամ այն քաղաքացու վերաբերյալ համակարգում առկա տեղամասերը:



Երեկ ՀՀԿ խորհրդի անդամ, ՀՀԿ նախընտրական շտաբի պետի տեղակալ **Դավիթ Հարությունյանը** «Նովոստի»-ում ասաց, որ կուսակցությունները դիմել են ԱԱԾ-ին՝ ընտրությունների թափանցիկությունն ապահովելու համար: «Յուրաքանչյուր կուսակցության, որը դիմում է ԱԱԾ-ին, կտրամադրվի մեկ աշխատանքային տեղ, որտեղից մայիսի 6-ի առավոտից սկսած մինչեւ այն ժամկետը, երբ հնարավոր է վիճարկել ընտրությունների արդյունքները, հնարավորություն ունենան այս կամ այն անձի վերաբերյալ ստանալու տեղեկատվություն՝ ե՞րբ են նրանք հատել Հայաստանի սահմանը եւ ո՞ր ուղղությամբ»: Հարությունյանը վստահ է, եթե ԱԱԾ-ն տրամադրի այդ տեղեկատվությունը, ապա այն ավելի կբարձրացնի վստահությունն ընտրական գործընթացի նկատմամբ: ԱԱԾ-ում արդեն տեղի է ունեցել առաջին հանդիպումը. արձագանքը դրական է:

Անդրադառնալով «Միասնական շտաբի»՝ Սահմանադրական դատարան դիմելու հայցին՝ ընտրություններից հետո ընտրողների թիվը հրապարակելու վերաբերյալ, Հարությունյանն ասաց, որ այն որեւէ աղերս չունի սահմանադրությանը: ՀՀԿ նախընտրական շտաբի պետի տեղակալն անհիմն է համարում խոսակցությունները, թե ի տարբերություն նախորդ ընտրությունների՝ ընտրողների թիվն աճել է եւ դա նպաստելու է ընտրակեղծիքներին: Նա ընդգծում է, որ դիմել են ոստիկանություն, խնդրել ցուցակները, ուսումնասիրել, եւ պարզվել է, որ անճշտություններ չկան: «Պարզեցինք, որ ի տարբերություն 2008-ի նախագահական ընտրությունների, ընտրողների թիվն աճել է, որովհետեւ նախկինում որեւէ տեղ չհաշվառված քաղաքացիները հաշվառվել են: Եղել են դեպքեր, երբ 18 տարին լրացած քաղաքացին չի դիմել ՀՀ քաղաքացիություն ստանալու», ասում է Հարությունյանը: Նրա մեկնաբանությամբ՝ եթե մի բնակարանում 20 հոգի է հաշվառված, դա դեռ չի նշանակում, որ ընտրությունները չեն կարող արդար անցնել: ՀՀ քաղաքացին ունի մեկ ձայն եւ ընտրելու իրավունք: «Այլ հարց, երբ քաղաքացին գրանցված է մի քանի ընտրատեղամասերում, կամ անունը կա ցուցակներում, բայց այդպիսի մարդ գոյություն չունի: Նրանք ուսումնասիրել են ցուցակները, պարզվել է, որ նույն անուն-ազգանունով բազմաթիվ համընկնումներ կան: Պարզվել է, որ վարչապետ Տիգրան Սարգսյանի անուն-ազգանուն-հայրանունով 4 անձ կա, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի անուն-ազգանուն-հայրանունով՝ երեք: Ավելին՝ ոստիկանությունը պարզել է, որ 222 քաղաքացի ոչ միայն նույն անուն-ազգանուն-հայրանունը, այլեւ ծննդյան միեւնույն տարեթիվն ու ամսաթիվն ունեն:

Հ. Հ.

# Մեկը ՍԴ է դիմում, մեկը՝ ԱԱԾ

**Մինչ ընտրախախտումների դեմ պայքարող միասնական շտաբը փորձում է դիմել Սահմանադրական դատարան, հանդիպակա նախաձեռնություն են կազմակերպել ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՀԴԿ-ն, ՀԿԿ-ն եւ ՕԵԿ-ը, ովքեր եւս կարեւորելով ընտրությունների ժամանակ երկրից բացակա անձանց փոխարեն քվեարկությունը բացառելը եւ նպատակ ունենալով լրացուցիչ վերահսկողական մեխանիզմներ սահմանել այդ առումով, դիմել են ԱԱԾ: Դիմումի իմաստն այն է, որ դիմող կուսակցություններին մեկական ներկայացուցչի հնարավորություն տրվի օգտվելու կառավարությանն առընթեր ԱԱԾ սահմանապահ զորքերի կողմից օգտագործվող սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվության (ՍԷԿՏ) համակարգից՝ ստուգելու այդ համակարգում առկա տվյալները այս կամ այն քաղաքացու վերաբերյալ, եթե այդ քաղաքացին քվեարկությանը մասնակցել է այն տեղամասում, որի արդյունքները անվավեր ճանաչելու դիմումներ են ներկայացվել կամ ներկայացվելու են: ՀՀԿ մամուլի ծառայության այս առթիվ տարածած հայտարարության մեջ նշված է, թե պարզվել է, որ ՍԷԿՏ-ը պարունակում է ոչ թե անձանց Հայաստանում գտնվելու վերաբերյալ տվյալներ, այլ միայն տվյալներ սահմանային կետերը հատելու վերաբերյալ: Քանի որ տարբեր սահմանային կետերը տարբեր ժամանակներում են միացել համակարգին, այդ առումով էլ սահմանափակումներ կան, ինչի արդյունքում այս համակարգը, փաստորեն, չի կարող երաշխավորել անձի Հայաստանում, ինչպես նաեւ երկրի սահմաններից դուրս գտնվելը:**

**Հայտարարությամբ հանդես եկած ուժերը հավաստիացնում են, որ ՍԷԿՏ համակարգի միջոցով ստացված տվյալները կօգտագործվեն բացառապես ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով դիմելիս եւ իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու համար ոստիկանություն դիմելիս:**

**Ավելի ուշ պարզ դարձավ, որ դիմումին միացել է նաեւ ԲՀԿ-ն:**

**Ըստ ՀԿԿ ընտրական շտաբի պետի տեղակալ Դավիթ Հարությունյանի՝ ընտրությանը մասնակից մյուս կուսակցությունները եւս կարող են միանալ այս նախաձեռնությանը, չնայած նախնական քննարկումներին ՀԱԿ-ը հրաժարվել է մասնակցել:**

**Երեկ հայտնի դարձավ նաեւ, որ ընտրախախտումների դեմ պայքարող կամ ընտրությունների օրինականությունը վերահսկող միասնական շտաբը եւս նորություն ունի՝ արդեն Ազգային ժողովի նախագահին է հանձնել ՍԴ դիմելու համար քառորդ պատգամավորի ստորագրություն պարունակող ձեւաթուղթը, որով ՍԴ-ից պահանջվում է հակասահմանադրական ճանաչել քվեարկած ընտրողների ցուցակների հրապարակումն արգելող Ընտրական օրենսգրքի դրույթները: ԱԺ նախագահը քսանչորս ժամվա ընթացքում ձեւաթուղթը պետք է ուղարկի ՍԴ:**

Մ. Խ.

# Զորակցություն ՕԵԿ-ին

**«Օրինաց երկիր» կուսակցությունը Երեւանում հյուրընկալել էր Եվրոպական ժողովրդական կուսակցության փոխնախագահ Խայմե Մայոր Օրեխային: Կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանի գլխավորությամբ կայացած հանդիպմանը ԵԺԿ փոխնախագահը առաջիկա խորհրդարանական ընտրությունների նախաշեմին իր զորակցությունն է հայտնել եվրոպական մեծ քաղաքական ընտանիքի անդամ ՕԵԿ կուսակցությանը:**

**Զրուցակիցները մտքեր են փոխանակել Հայաստանում բարեփոխումների իրականացման եւ օրենքի գերակայության հետ կապված հարցերի շուրջը:**

**Արթուր Բաղդասարյանը նշել է, որ «Օրինաց երկիրը» Հայաստանի ամենաակտիվ քաղաքական միավորներից է, որը պայքարում է Հայաստանում բարեփոխումների իրականացման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության եւ սոցիալական արդարության հաստատման համար:**

**«Եվրոպական ժողովրդական կուսակցությունը աջակցում է «Օրինաց երկիր» կուսակցությանը: Մենք աջակցում ենք ձեզ, որովհետեւ դուք պայքարում եք մարդու իրավունքների պաշտպանության եւ ժողովրդավարության զարգացման համար, մենք աջակցում ենք ձեզ, որովհետեւ դուք պայքարում եք Հայաստանում եվրոպական արժեքների տարածման համար: Այսօր՝ ընտրությունների նախաշեմին, ՕԵԿ-ի հաջողությունը կարեւոր է մեր քաղաքական ընտանիքի համար»,- հայտարարել է ԵԺԿ փոխնախագահ Խայմե Մայոր Օրեխան:**

## ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐ

# Փոխանակման կետերը հրաժարվում են փոխանակել

*ԿԲ-ն էլ հրաժարվում է քաղաքացիների իրավունքները պաշտպանել*

Մի քանի տարի առաջ Հայաստանի կենտրոնական բանկը կտրուկ քայլեր ձեռնարկեց փոխանակման կետերի դեմ, որպեսզի վերջիններս զբաղվեն իրենց բուն գործունեությամբ՝ սպասարկեն քաղաքացիներին, այլ ոչ թե ստվերային բիզնեսը: Շատերը կհիշեն, որ այն ժամանակ մեծ խնդիր էր 10 կամ 20 դոլար փոխանակելը, քանի որ փոխանակման կետերը հրաժարվում էին դա անել, ասելով, որ «մանր չունեն»: Նրանց մեծ մասը հիմնականում սպասարկում էր ստվերային բիզնեսը եւ քաղաքացիների 10 կամ 20 դոլար փոխանակելը նրանց համար իսկապես «մանր» գործ էր: Հիշեցնենք, որ այդ մասին մամուլի ասուլիսի ժամանակ հիշատակեց նաեւ ԿԲ այն ժամանակվա նախագահ Տիգրան Սարգսյանը, ընդգծելով, որ փոխանակման կետերը պարտավոր են սպասարկել քաղաքացիներին: Ինչո՞ւ ենք սա հիշեցնում:

Վերջերս Երեւանի բանկերից մեկի փոխանակման կետում ցանկացանք եվրոն փոխանակել դրամով, սակայն, ի զարմանս մեզ, բանկի աշխատակիցը համաձայնեց փոխանակել ոչ ամբողջ գումարը, մասնավորապես հրաժարվելով վերցնել 2 եվրոյանոց մետաղադրամը: «Ինչո՞ւ» հարցին այդպես էլ պատասխան չստացանք: «2 եվրոն չենք փոխանակում, մնացածը փոխանակե՞նք», սա փոխանակման կետի աշխատակցի հարց-վերջնագիրն էր: Արդեն հետաքրքրությունից դրդված փորձեցինք փոխանակել մնացած 2 եվրոն այլ փոխանակման կետերում, բայց ապարդյուն: Բոլորը միաբերան հրաժարվեցին, դարձյալ ոչ մի կերպ չպատճառաբանելով իրենց որոշումը:

Թվում էր, թե քաղաքացիների իրավունքի եւ շահերի ոտնահարման այս վրդովեցուցիչ փաստը բանկերի եւ մյուս փոխանակման կետերի կամայական մոտեցման արդյունք էր: Ուստի պարզաբանումներ ստանալու համար դիմեցինք Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանին, նրան ուղղելով հետեւյալ հարցերը.

1. Ո՞ր օրենքի ո՞ր հոդվածի համաձայն, Հայաստանում ԿԲ-ից լիցենզիա ստացած փոխանակման կետերը իրավունք ունեն մերժելու մետաղադրամով մանր համարվող արտարժույթը դրամով փոխանակելը:

2. Եթե այդպիսի օրենք կամ դրույթ չկա, ապա ի՞նչի հիման վրա են նրանք մերժում քաղաքացիներին այդ ծառայությունը մատուցելը, դա օրինակա՞ն է, եւ եթե ոչ, ապա դրա համար ի՞նչ պատիժ է նախատեսված:

3. Քաղաքացիները ո՞ւմ կարող են դիմել, երբ խախտվում են նրանց շահերն ու իրավունքները կոնկրետ այս դեպքում: ԿԲ-ն չի՞ պատրաստվում պահանջել փոխանակման կետերից կատարել քաղաքացիներին ծառայություններ մատուցելու իրենց պարտավորությունը:

Ի պատասխան ստացանք պարզաբանում, որ փոխանակման կետերը պարտավոր են փոխանակել միայն ՀՀ դրամ մետաղադրամները եւ իրավունք ունեն չփոխանակել արտարժույթ մետաղադրամները: Փաստորեն, Կենտրոնական բանկի կարծիքով նույնպես, փոխանակման կետերը կարող են չփոխանակել քաղաքացիների մոտ եղած մետաղադրամները, իսկ թե ինչո՞ւ, ո՞ր օրենքի համաձայն կամ ո՞վ պետք է պաշտպանի քաղաքացիների իրավունքները, բնական է, որ անհայտ մնաց: Սրա հետ փաստորեն անհայտ մնաց, թե ԿԲ ներկայիս նախագահն ինչպե՞ս է վերաբերվում ԿԲ նախորդ նախագահ Տիգրան Սարգսյանի այն հայտարարությանը, որ փոխանակման կետերը պարտավոր են սպասարկել քաղաքացիներին եւ փոխանակել նրանց գումարները: Իսկ գուցե ԿԲ նախագահի փոփոխությամբ ԿԲ-ի մոտեցո՞ւմն էլ է փոխվում այս հարցի վերաբերյալ: Այսինքն, Տիգրան Սարգսյանը գտնում է, որ փոխանակման կետերը պետք է սպասարկեն քաղաքացիներին, իսկ Արթուր Ջավադյանը անշուշտ համաձայն լինելով դրան, գտնում է, որ դրանք պարտավոր չեն լրացուցիչ ծախս անել մետաղադրամի պարագայում, քանի որ մետաղադրամը պահելը, փոխանակելը ծախսատար է:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Թիվ 2/4 ընտրատեղամասում ընտրողների ցուցակները հասանելի չեն

Որքան էլ խոսվում, գրվում է, թե ընտրողները կարող են նախնական ընտրացուցակներում ճշտել իրենց անունները ընտրատեղամասերում փակցված ցուցակներից, որոշ տեղերում դա հնարավոր չէ: «**Ազգը**» վերջին երկու օրվա ընթացքում մի քանի դժգոհություններ է ստացել Նոր Նորքի թիվ 2/4 ընտրատեղամասի բնակիչներից, որը գտնվում է երաժշտական թիվ 1 դպրոցի շենքում: «Ցուցակներն այնքան բարձր են փակցված եւ շատ մանր տառատեսակով, որի պատճառով հնարավոր չէ որեւէ ազգանուն ճշտել»: «**Ազգը**» երեկ եղավ նշված ընտրատեղամասում եւ համոզվեց, որ դժգոհությունները արդարացի էին: Ընտրատեղամասում մոտ 2 մետր հասակ ունեցող մի տղամարդ պնդում էր, թե «շատ էլ լավ կարդում եմ, եթե չեք տեսնում, մարդ բերեք՝ թող կարդա...»: Բայց չէ՞ որ ոչ բոլոր հայերը 2 մետր հասակ ունեն եւ խոշորացույցով էլ չեն ման գալիս ու, դրան էլ գումարած, դեռ մեկին էլ հետը ընտրատեղամաս պիտի տանեն ցուցակներում իրենց անունը ստուգելու: «**Ազգը**» գնաց թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով եւ փոխանցեց ընտրողների արդարացի դժգոհությունը: Հանձնաժողովի նախագահ Գուրգեն Խաչատրյանը եւ տեղակալ Ֆրունզ Վարդանյանը խոստացան, որ 24 ժամվա ընթացքում թերությունները կվերացնեն:

Ս. Ս.

## ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

# Վանի 1915 թվի ապրիլյան հերոսամարտը

Հայ ժողովրդի նորագույն պատմության փառավոր էջերից մեկը Վանի 1915 թվի ապրիլյան նշանավոր հերոսամարտն է, որի 97-րդ տարեդարձը լրանում է այս տարի:

20-րդ դարի սկզբին Թուրքիայում իշխանության գլուխ անցած երիտթուրքերի պարագլուխները, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, 1915թ. գարնանը որոշում ընդունեցին զանգվածային տեղահանության անհրաժեշտության անվան տակ բնաջնջել Արեւմտահայաստանի եւ Թուրքիայի տարբեր բնակավայրերում ապրող հայ ազգաբնակչությանը, նպատակ ունենալով մեկընդմիշտ վերջ տալ Հայկական հարցին:

Այդ նպատակով, ինչպես արվում էր սուլթան Աբդուլ Համիդի օրոք, հայաշատ գավառներում հրահրում էին հայ-քրդական ընդհարումներ, որոնց հետեւում էին հայ ազգային հասարակական գործիչների ձերբակալություններ եւ սպանություններ: Թուրքերի այսպիսի գործելակերպը անծանոթ չէր վանեցիներին, որոնք Արմենական կուսակցության առաջնորդությամբ դեռեւս 1896թ. հունիսի 3-ից մինչեւ 8-ը զինված դիմադրություն էին ցույց տվել թուրք ջարդարարներին՝ ստիպելով Թուրքիայի ոճրագործ կառավարությանը գնալ որոշակի զիջումների:

1908թ. օսմանյան սահմանադրության հռչակումով Վասպուրականի հայությունն էլ մի պահ հավատաց, թե իր տառապանքները վերջ են գտել եւ ազգամիջյան ընդհարումները դադարելու են: Սակայն 1909թ. Ադանայի կոտորածը եկավ մեկ անգամ էլ ապացուցելու (դրանից հետո նաեւ բազմիցս), որ թուրքը մնում է թուրք, եւ չպետք է նրան ոչ վստահել եւ ոչ էլ հավատալ: Նա իր հայաջինջ քաղաքականության համար միշտ էլ, որպես գործիք, օգտագործել է հայ գյուղացու բնակակից տգետ քրդությանը, որը մինչեւ վերջ անընդունակ եղավ ըմբռնելու իր չարն ու բարին, միշտ առաջնորդվեց կրոնական մոլեռանդությամբ ու ընչաքաղց ավազակաբարո բնազդով՝ ուղղակի պատուհաս դառնալով հայերի համար:

Իրադարձությունները Թուրքիայում այս վիճակումն էին, երբ պայթեց առաջին համաշխարհային պատերազմը (19.07.1914թ.), ու Թուրքիան հոկտեմբերի 16-ին պատերազմական գործողություններ սկսեց Ռուսաստանի դեմ:

Եվ ահա, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, երիտթուրքերի կառավարությունը անցավ իր հրեշավոր պլանների իրականացմանը՝ Արեւմտահայաստանի հայ ազգաբնակչության բնաջնջմանը:

Արեւմտահայաստանում ամենահայաշատ նահանգը, Սեբաստիայից հետո (370000 հայ), Վասպուրականն էր (242000 հայ), իր Վան կենտրոնով եւ Այգեստան արվարձանով, որտեղ ապրում էր 25000 հայ:

Կովկասյան ռազմաճակատում կրած ջախջախիչ պարտությունների մեջ մեղադրելով հայերին, թուրքական կառավարությունը հրահանգեց Վանի կուսակալ Ջեւդեթին արագորեն մաքրել հաշիվները Վասպուրականի հայության հետ: Ջեւդեթը վանեցիներից պահանջեց հանձնել 18-45 տարեկան բոլոր զինվորագուներին, իբր օսմանյան բանակի ամրաշեն զորամասերում ծառայելու համար: Երիտասարդությունը տատանվում էր՝ գնալ, թե չգնալ: Հենց այս ճակատագրական օրերին գտնվեցին ժողովրդի միասնական ուժն ու կամքը համախմբող գործիչներ՝ Արամ Մանուկյան, Հայկակ Կոսոյան, Արմենակ Եկարյան, Բուլղարացի Գրիգոր, Կայծակ Առաքել եւ ուրիշներ, որոնք կազմակերպեցին Վանի հերոսամարտը:

Պատրաստվելով թուրքական իշխանությունների նոր բռնություններին՝ Վանի տեղական կազմակերպությունների ջանքերով ձեռք էր բերվել զենք ու զինամթերք, ստեղծվել էին ինքնապաշտպանության գոտիներ, զինված խմբեր, նշանակվել շրջանապետներ ու խմբապետներ:

Վասպուրականի գավառներում մարտ ամսվա վերջերին փաստորեն սկսվել էր կոտորածը: Դեպի Վան ուղեւորվող օտարերկրյա միսիոներներն ամենուր հանդիպում էին դիակների՝ փռված ճանապարհի երկու կողմում: Արդեն մարտի 29-ին լուր հասավ Վան, թե Շատախի երիտասարդությունը դիրքերն է մտել, եւ որ ընդհարումն անխուսափելի է: Ջեւդեթն այս դեպքը վարպետորեն օգտագործեց՝ ծուղակը գցելով ՀՅԴ-ի Վասպուրականի ղեկավարներից Իշխանին (Նիկոլ Միքայելյան) եւ նրա երեք ընկերներին, որոնք դավադրաբար սպանվեցին Հիրճ գյուղում: Սա ցնցող լուր էր, որ միանգամից սթափեցրեց եւ ոտքի հանեց Վանի հայ ազգաբնակչությանը՝ մեկ մարդու նման դիմելու միայն ու միայն ինքնապաշտպանության փրկարար գործին:

Դեռ այս լուրը Այգեստան չհասած՝ հաջորդ օրը Ջեւդեթը նույն խորամանկությամբ ուզեց ծուղակը գցել Արամին եւ Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Արշակ Վռամյանին: Նրան հաջողվեց ձերբակալել Վռամյանին, որն այնուհետեւ խեղդամահ արվեց Վանա լճում, իսկ Արամը պատահականորեն խույս տվեց ձերբակալումից եւ նշանակվելով Վանի ինքնապաշտպանության քաղաքական մարմնի ղեկավար, զինվորական մարմնի հետ, որը գլխավորում էր ռամկավար Արմենակ Եկարյանը, ղեկավարեց ժողովրդական դիմադրությունը Այգեստանում: Ոճրագործ նահանգապետը մտադիր էր վերացնել Վանի հայ ղեկավարությանը, որ իր առջեւ մնար միայն անպաշտպան ժողովուրդ, որին նա պիտի հեշտությամբ ոչնչացներ: Հետո նա տեսավ այդ ժողովրդի կատաղության թափը, որի առջեւ անզոր դարձան նրա հիվանդագին ուղեղի հղացած բոլոր միջոցները:

Ապրիլի 5-ին Այգեստանի զինված խմբերը զբաղեցրին իրենց դիրքերը, սպասելով իրադարձությունների հետագա զարգացմանը: Իսկ արդեն ապրիլի 4-ին ընդհատվել էր կապը Վանի քաղաքամիջի եւ Այգեստանի միջեւ: Նրանք անտեղյակ դարձան միմյանց անցուդարձին եւ կայացած որոշումներին: Զինվորական մարմնի որոշումով զինված խմբերը անցան ռազմական վիճակի: Իսկ թուրքական կանոնավոր զորքը՝ շրջապատելով Այգեստանը, պատրաստվում էր հարձակման: Վասպուրականի հայասպան կուսակալը հրամայել էր, որ Այգեստանի վրա դուրս բերվեն ողջ ռազմական ուժն ու ոստիկանությունը, որոնց պետք է միանային թուրք ու քուրդ խուժանը, եւ հարձակումը սկսել բոլոր ուղղություններով: Նա հրամայել էր նաեւ ոչնչացնել մինչեւ վերջին հայը: Վանեցիները պատրաստություն էին տեսնում թշնամու հարձակմանը դիմագրավելու համար: Լավ էր, որ թշնամին ձեռնոց նետեց, որով եւ կռվի ազդանշանը տալով չկարողացավ հանկարծակիի բերել հայ մարտիկներին:

Այգեստանն ուներ պաշտպանական հինգ շրջան, 11 շրջանապետ, 73 դիրք, մոտ 1000 զինվոր, 500 հրացան, 550 մաուզեր եւ 100 000 փամփուշտ: Թուրքերն այս փոքրաթիվ ուժերի դեմ կենտրոնացրել էին 6000 զինվոր, 12 թնդանոթ, մեծ քանակությամբ հրազեն եւ փամփուշտ: Թուրքերը օղակել էին Այգեստանը համարյա բոլոր կողմերից: Թուրքերը ունեին նաեւ շատ կարեւոր ռազմական հենակետ: Դա հայկական թաղերի վրա իշխող Համուդ-աղայի զորանոցն էր, որը կտրել էր հայկական դիրքերը միմյանցից:

Ապրիլի 7-ի առավոտյան Ուրբաթ առվի կողմից լսվեցին մի քանի կրակոցներ, Այգեստանն օղակող բոլոր դիրքերից սկսվեց հրացանաձգություն, թուրքական զորանոցներից հարյուրավոր զինվորներ հարձակվեցին հայկական դիրքերի վրա: Մոտ 70 դիրքերից հայ մարտիկները թշնամուն պատասխանեցին դիպուկ կրակով եւ ջլատեցին նրա ուժերը: Այգեստանը կլանվեց վառոդի ծխի, կրակի ու փոշու մեջ: Եղան առաջին զոհերն ու վիրավորները, սակայն հայ մարտիկները ոչ մի թիզ չնահանջեցին: Այգեստանը պատնեշի վրա էր: Նա ինքնամոռաց կերպով կատաղի կռվի էր բռնվել իր դարավոր թշնամու հետ: Ապրիլի 7-ի գիշերը քուրա եղավ հայ մարտիկների համար, որոնք կոփված դուրս եկան նրա բովից, որոնց մեջ կային նաեւ այնպիսիները, որոնք առաջին անգամ էին ստանում կրակի մկրտություն:

Ապրիլի 8-ի գիշերը հրկիզվեց ու գրավվեց անգլիական հյուպատոսարանը, որն իր թուրք պահակախմբով տագնապի էր մատնել շրջապատի հայկական դիրքերը: Դիմադրության առաջին եւ երկրորդ օրերը թեեւ շատ դիրքեր ավերվեցին, եղան զոհեր, բայց ամեն մի դիրքապահ, հավատարիմ իր ուխտին, ոչ մի թիզ հող չզիջեց թշնամուն: Վարժապետանոցի մի խումբ աշակերտներից կազմված նվագախումբը՝ Վանի նշանավոր «Ֆանֆառը», կռիվների սկզբից մինչեւ վերջ դարձավ Այգեստանի հերոսամարտի խանդավառ ոգին, որը թնդանոթների որոտներին ի պատասխան հայտնվում էր դիրքերում եւ կատարում «Ամենայն տեղ մահը մի է» երգը՝ գոտեպնդելով հայ մարտիկներին:

Ապրիլի 9-ի գիշերը հիմնահատակ կործանվեց բռնության ու չարիքի ամրոցը՝ Համուդ-աղայի զորանոցը Այգեստանում: Այս ձեռնարկը Այգեստանի ինքնապաշտպանության պատմության ամենահերոսական դրվագներից մեկը եղավ, Այգեստանն այլեւս անխոցելի եւ անառիկ դարձավ: Դրանից հետո հայ զինվորն սկսեց արհամարհել թշնամու անվերջ հարձակումները եւ ամուր ու անվարան պահեց իր դիրքերը:




Կուսակալ Ջեւդեթի հարվածը ժայռի հանդիպեց: Նա վճռել էր 24 ժամում հողին հավասարեցնել Այգեստանն ու Վանը, սակայն տեսավ թավալգլոր ընկնող իր ասքյարներին եւ զգաց, որ դեռ շատ արյուն պիտի թափվի մինչեւ հայ զինվորին հասնելը:

Այնուհետեւ հայ մարտիկները տարբեր միջոցներ կիրառելով սկսեցին քանդել եւ ավերել հակառակորդի պատնեշները:

Չնայած Վանի միջնաբերդը գտնվում էր թուրքերի հսկողության տակ, որտեղից անընդհատ գնդակոծվում էին հայկական դիրքերը, այնուամենայնիվ նրանց չհաջողվեց առավելության հասնել: Թուրքերի ռազմական գործողությունները ղեկավարող գերմանական բանակի գնդապետ՝ վենեսուելացի Ռաֆայել դե Նոգալեսը իր հուշերում գրում է, որ հայերը ունեին լավ պաշտպանական դիրքեր, որոնց շնորհիվ էլ մշտական հսկողություն էին սահմանել անցուդարձի վրա: Նրանք զինված էին մաուզերներով, որոնցով կարճ հեռավորության վրա կենտրոնացված կրակ էին բացում հակառակորդի վրա, որը կարծում էր, թե հայ մարտիկները գնդացիր ունեն: Աստիճանաբար վարժվելով մարտական գործողություններին, հայ մարտիկները ձեռնամուխ եղան հետզհետե քանդել ու գրավել թշնամու պատնեշները, ականներով, ռումբերով եւ հարձակումներով ամրապնդեցին իրենց դիրքերը:

Անընդհատ նորանոր ուժեր տեղափոխելով Այգեստանի ճակատ՝ Ջեւդեթը հրամայում էր շարունակել հարձակումը շուտափույթ հաղթանակ տանելու համար: Վանի եւ Այգեստանի գրավումը նա նույնացնում էր Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի դեմ տարած հաղթանակի հետ:

Կռիվների առաջին տասը օրվա ընթացքում կուսակալն Այգեստանի վրա սպառեց իր հարձակողական բոլոր միջոցներն ու ձեւերը եւ հաջողության ոչ մի երաշխիք չունենալով՝ անցավ պաշարման եւ սպասեց հայ հերոս պաշտպանների զինամթերքի եւ պարենի սպառմանը: Դիլմանի ճակատամարտում Խալիլ փաշայի բանակը ջարդելուց հետո հայ կամավորական ջոկատները Անդրանիկի եւ Քեռու (Արշակ Գաֆավյան) հրամանատարությամբ, ռուսական բանակի (հրամանատար Թովմաս Նազարբեկով) հետ միասին սրընթաց շարժվեցին դեպի Վան: Այս մասին տեղյակ Ջեւդեթը մայիսի 5-ին փախավ Վանից, իսկ արդեն մայիսի 6-ին հայ կամավորական ջոկատները մտան Վան: Վանեցիները տարան տպավորիչ եւ փառավոր հաղթանակ: Նրանք իրենց հոգեկան գերագույն բերկրանքի պահն էին վայելում եւ իրենց դարավոր ու նվիրական երազանքը իրականացված էին տեսնում:

Նրանք հույսերով ու անձնվեր աշխատանքով էին պատրաստվում գալիք օրերին, տեսնելու համար վերածննդի մեծ տոնը: Բայց ավա՜ղ, կարճ տեւեց այդ ուրախությունը: 70 օր անց լսվեց նահանջի չարագուշակ հրամանը: Սկսվեց Մեծ գաղթը 1915թ. հուլիսի 18-ին, որից հետո թուրքերն անմիջապես մտան Վան: Արցունքն աչքերին վանեցին ստիպված էր հեռանալ իր դարավոր ծննդավայրից, իր բնօրրանից ու բռնել գաղթի տանջալից ճանապարհը դեպի Արարատյան երկիր, դեպի Արեւելյան Հայաստան, սակայն հույսը չկտրելով իր բնօրրանը շուտով վերադառնալուց: Եվ իսկապես, երկու շաբաթ անց՝ օգոստոսի 2-ին ռուսական բանակը նորից անցավ հարձակման եւ գրավեց Վանը: Դրանից հետո դարձյալ մի քանի անգամ Վանը ձեռքից ձեռք անցավ, մինչեւ որ 1917-ին ստեղծվեց մի կայուն իրավիճակ Ռուսաստանի վերահսկողության ներքո: Արեւելյան Հայաստանում ապաստան գտած հայ ազգաբնակչության մի որոշ մաս՝ թվով մոտ 20 000, վերադարձավ Վան, որտեղ կազմավորվել էր Վասպուրականի շրջանային վարչություն, որն աստիճանաբար իր ձեռքում կենտրոնացրեց Վասպուրականի ամբողջ պետական-վարչական իշխանությունը: Ռուսաստանի ժամանակավոր կառավարության կողմից Վանի նահանգի կոմիսար նշանակվեց Կոստի Համբարձումյանը: Սակայն, դժբախտաբար, Ռուսաստանում տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը, եւ ռուսական բանակը լքեց Կովկասյան ռազմաճակատը, դատապարտելով հայ ժողովրդին զրկանքների ու տառապանքների, իսկ Արեւմտահայաստանը հանձնեց թուրքերին:

Այնուամենայնիվ վասպուրականցիները Վանի ապրիլյան հերոսամարտի շնորհիվ կարողացան խուսափել զանգվածային կոտորածներից, պահպանեցին իրենց գենոֆոնդը, իսկ Վանից բերած զենքն օգտագործեցին Սարդարապատի ճակատամարտում՝ ապահովելով հաղթանակը եւ այս փոքրիկ հողակտորը, որն այժմ կոչվում է Հայաստանի Հանրապետություն: Ուստի Վանի հերոսամարտի հաղթանակի օրը՝ մայիսի 6-ը, միայն վասպուրականցիների տոնը չէ, համայն հայության ամենահիշարժան ազգային տոներից մեկն է, որը պետք է միշտ հիշվի ու նշվի՝ փոխանցվելով սերնդեսերունդ:

Ամեն տարի՝ մայիսի 3-րդ կիրակի օրը Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտը հավերժացնող «Արծիվ Վասպուրականի» հուշակոթողի մոտ՝ Աշտարակ-Գյումրի ավտոմայրուղու հարեւանությամբ, տեղի է ունենում ավանդական տոնահանդես՝ ոգեկոչելու Հերոսամարտի մասնակիցների հիշատակը, վառ պահելու ապրողների եւ գալիք սերունդների սրտերում հայրենաբաղձության անմար կրակը:

Փա՜ռք եւ պատիվ հերոսական Վանի քաջարի մարտիկներին:

**ՌՈՍՏԻԿ ՀՈՎՆԱՆՅԱՆ**
**«Վան-Վասպուրական» հայրենակցական հասարակական կազմակերպության նախագահ**

# Բուխարեստում լույս է տեսել հայ ցեղասպանագետի ուսումնասիրությունը ռումիներեն

Օրերս Ռումինիայի մայրաքաղաքում հրատարակվեց բազմավաստակ արեւելագետ-ցեղասպանագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի խորհրդի անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն»** մենագրությունը, որը ֆրանսերենից ռումիներեն են թարգմանել **Թագուհի եւ Մադլեյն Կարակաշյան** քույրերը (Genocidul Armean, Bucuresti, 2012, 112 էջ)։ Ռումիներենը տասներկուերորդ լեզուն է, որով լույս է տեսնում հեղինակի նշված աշխատությունը։ Մինչ այդ մենագրությունը լույս էր տեսել անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերեն, ճապոներեն, հունգարերեն, հայերեն, արաբերեն, պարսկերեն, իսկ 2011թ. վերջերին՝ կորեերեն։

Աշխատությունը գրելիս հեղինակը նկատի է ունեցել, որ գրվում է օտար ընթերցողի համար, որը երբեմն անտեղյակ է անգամ պատմական հանրահայտ իրողություններին ու փաստերին։ Դա իր կնիքն է դրել աշխատության կառուցվածքի, քննարկվող հարցերի շրջանակների եւ նրանց բնույթի վրա։

1915թ. Օսմանյան կայսրությունում իրականացված XX դ. առաջին ցեղասպանությունից՝ Հայոց ցեղասպանությունից, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական նացիստների իրագործած հրեական Հոլոքոսթից եւ նրանց հաջորդած այլ ցեղասպանություններից հետո, ինչպես նշում է հեղինակը, ձեւավորվեց գիտական մի նոր ուղղություն՝ ցեղասպանագիտությունը, որի ակունքները պետք է փնտրել հայկական իրողություններում, եւ որի ձեւավորման մեջ նաեւ նկատելի դերակատարում են ունեցել ցեղասպանության հարցերին նվիրված պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի բազմաթիվ աշխատությունները։ Հայեցակարգային տեսանկյունից պետք է առանձնացնել «ցեղասպան պետության» հիմնադրույթը։ Հայ անվանի գիտնականն այն տեսակետն է հիմնավորում, որ եթե այդ հիմնադրույթը կիրառենք Հայոց ցեղասպանության՝ Արմենոցիդի, եւ հրեական շոայի՝ Հոլոքոսթի պարագայում, ապա Օսմանյան պետությունը եւ նացիստական Գերմանիան իրենց հանցանքներով պատմության մեջ մտնում են որպես ցեղասպան պետություններ։




Աշխատության մեջ քննարկված են այնպիսի առանցքային հիմնախնդիրներ, ինչպես Հայաստանը դարերի ընթացքում. Հայոց լեռնաշխարհը հայերի բնօրրանը եւ կենսատարածքը, իսկ իրենք հայերը՝ նրա բնիկները եւ տերերը լինելու հանգամանքները, Արեւմտյան Հայաստանի նվաճումը Օսմանյան կայսրության կողմից, որը իրականացվեց 1639թ., երբ Հայաստանը բաժանվեց շահական Պարսկաստանի եւ Օսմանյան կայսրության միջեւ, հայերի վարչաիրավական, ազգային-քաղաքական եւ սոցիալ-տնտեսական դրությունը Օսմանյան կայսրությունում, Հայկական հարցը եւ նրա փուլերը, Հայոց ցեղասպանությունը-Արմենոցիդ, որտեղ հեղինակը հանգամանորեն եւ շատ դեպքերում նորովի է լուսաբանում Հայոց ցեղասպանության պատճառները։ Համոզիչ է նրա այն տեսակետը, որ «Ցեղասպանությունը ոչ թե առանձին անհատների, այլ Թուրքիայի պաշտոնական պետական քաղաքականությունն էր»։ Նրա կարծիքով՝ դա բխում էր Օսմանյան կայսրության ոչ թուրք՝ քրիստոնյա եւ մուսուլման բնակչության բռնի թուրքացման քաղաքականության տրամաբանությունից, որը պետք է իրականացվեր երեք մակարդակներով. ա) էթնիկական զտում եւ բոլոր ոչ թուրք ժողովուրդների բռնի թուրքացում, բ) էթնիկապես «մաքուր թուրքական պետության ստեղծում», գ) Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանում եւ նրա հետագա տրոհման կասեցում։ Աշխատության մեջ կարմիր թելի նման այն միտքն է անցնում, որ ոչ թուրք ժողովուրդները կանգնել էին երկընտրանքի առջեւ՝ կամ կամավոր ձուլում եւ թուրքացում, կամ, հրաժարվելու դեպքում, բռնի ոչնչացում, որի գիտական սահմանումը ցեղասպանությունն է։ Այս կապակցությամբ հայ պրոֆեսորն ընդգծում է, որ Հայոց ցեղասպանությունը լրիվ տեղավորվում էր էթնիկապես մաքուր թուրքական պետություն ստեղծելու, Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու եւ պանթուրքիզմի երիտթուրքական պաշտոնական ծրագրերի շրջանակներում։ Նա վկայակոչում է երիտթուրքական ղեկավարներից մեկի՝ Ալի Իհսանի այն կարծիքը, որ «Եթե չլիներ Հայաստանը, ապա Կովկասը վաղուց պատկանած կլիներ մեզ»։ Ահա այստեղ պետք է փնտրել Հայոց ցեղասպանության պատճառները։ Աշխատությունում հանգամանորեն լուսաբանված է հայերի նկատմամբ երիտթուրքերի կիրառած ցեղասպան քաղաքականությունը Ստամբուլում, Խարբերդի, Սվասի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի եւ Դիարբեքիրի հայկական վեց վիլայեթներում եւ Օսմանյան կայսրության այլ հայաբնակ շրջաններում։ Հետաքրքրական է հեղինակի եզրակացությունն առ այն, որ երիտթուրքերի ղեկավարների՝ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի, Նազիմի, Շաքիր Բեհաեդդինի եւ մյուսների՝ հայերի ասորիների, հույների եւ արաբների ու այլ ժողովուրդների նկատմամբ կիրառված ոճրագործ քաղաքականությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Օսմանյան պետությունը XIXդ. կեսերին եւ XX դ. սկզբներին դարձել էր ցեղասպան պետություն եւ գենոցիդի օրրան։

Աշխատությունում հատուկ բաժին է հատկացված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցին։ Այստեղ հեղինակն առանձնահատուկ տեղ է հատկացրել 1919թ. կայացած երիտթուրքերի ղեկավարության դատավարության հարցին։ Ռազմական ատյանը պատասխանատու համարելով նրանց Թուրքիային պատերազմի մեջ ներգրավելու եւ հայերի նկատմամբ զանգվածային սպանություններ կազմակերպելու եւ բռնի տեղահանման համար, մահվան դատապարտեց երիտթուրքական կուսակցության եւ կառավարության բարձրագույն ղեկավարությանը, եւ այդ վճիռն ի կատար ածեցին հայ վրիժառուները։ Այդ իրողության լույսի ներքո, պրոֆեսորը գտնում է, որ անհրաժեշտ է նորովի մոտեցում Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցում։ Թուրքական դատարանի վճիռը վկայում է, որ Թուրքիան արդեն մեկ անգամ ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, եւ հիմա խոսք կարող է գնալ նրա վերաճանաչման մասին։ Միաժամանակ փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տրված հայոց ցեղասպանության ճանաչումը Եվրոպայի, Հարավային եւ Հյուսիսային Ամերիկաների եւ Ասիայի տարբեր պետությունների պառլամենտների, որոնց թիվն այսօր հասնում է 21-ի, բազմաթիվ միջազգային հեղինակավոր քաղաքական, կրոնական, գիտական եւ հասարակական կազմակերպությունների ու գործիչների կողմից։ Եվ այդ գործընթացը շարունակվում է։

Աշխատությունը հրատարակված է ճաշակով եւ հրատարակչական բարձր որակով, եւ պարունակում է մի քանի հետաքրքրական լուսանկարներ։

*Քաղաքական գիտության*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2251.36 | 1244 | 448,875,000 |
| 2 | Բոryան փողոց թիվ 4/3 | կաթսայատուն | 312.48 | 276.08 | 14,580,000 |
| 3 | Վիլնյուսի փող. Թիվ 91/2 | կաթսայատուն | 243.18 | 218.3 | 13,365,000 |
| 4 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 12,600,000 |
| 5 | Ռուբինյանց փողոց թիվ6/5 | կաթսայատուն | 353.75 | 344.65 | 13,707,000 |
| 6 | Պ.Ս ակի փող. Թիվ 1/6 | կաթսայատուն | 137.08 | 137.08 | 5,760,000 |
| 7 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.5 | 195.5 | 8,880,300 |
| 8 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 29,605,500 |
| 9 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328 | 328 | 9,083,700 |
| 10 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 20,295,000 |
| 11 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 12,892,500 |
| 12 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.3 | 262.3 | 8,060,400 |
| 13 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161 | 161 | 10,319,400 |
| 14 | Տիտոգրադյան փող. 14/6 | կաթսայատուն | 175.75 | 175.8 | 11,401,200 |
| 15 | Խաղաղ Դոնի 31/12 | կաթսայատուն | 308.75 | 308.75 | 17,631,900 |
| 16 | Բաշինջաղյան փողոց հ.187/6, հ.1 ԿՋՀ | կաթսայատուն | 297.49 | 297.4 | 15,390,000 |
| 17 | ԿՋՀ հ.35 Արարատյան 1 | կաթսայատուն | 233.02 | 205.1 | 7,677,000 |
| 18 | Կոմիտասի պող. 7/12 | կաթսայատուն | 333.46 | 275.3 | 24,075,000 |
| 19 | Ա.Խաչատրյան փողոց թիվ 4/3 | կաթսայատուն | 394.73 | 342.7 | 22,770,000 |
| 20 | Աղոնցի փող. Հ.17/6 | կաթսայատուն | 231.8 | 218.6 | 17,667,000 |
| 21 | Աղոնցի փող. Հ.13/10 | կաթսայատուն | 241.8 | 211 | 16,884,000 |
| 22 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.5 | 22,855,500 |
| 23 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.1 | 22,732,200 |
| 24 | Բաբաջանյան 143/3 | կաթսայատուն | 319 | 280 | 20,340,000 |
| 25 | Ագաթանգեղոսի 29 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 16 | 10,530,000 |
| 26 | Սարյան 2 48 տար. | ոչ բնակելի տարածք | | 6 | 260,000 |
| 27 | Արցախի 28/2 | ոչ բնակելի տարածք | 62.3 | 44 | 1,980,000 |
| 28 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.8 | 4,122,000 |
| 29 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.8 | 8,770,500 |
| 30 | Մաշտոցի 48շ 78 տար | ոչ բնակելի տարածք | | 7.5 | 1,665,000 |
| 31 | Թումանյան 1անց 28 շենք | ոչ բնակելի տարածք | | 24 | 4,500,000 |
| 32 | Իսակովի պող 36/1 19,շին | ոչ բնակելի տարածք | | 39.9 | 4,815,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն։

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM։

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173)։

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը։

Աճուրդը կայանալու է 2012թ մայիսի 15-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում։

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ մայիսի 15-ը, ժամը 14.00-ն։

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 2ե որոշմամբ**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՊԸԱՇՁԲ-12/2**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, որը գտնվում է ք.Երեւան, Արշակունյաց 7 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ։

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կոմիտեի կարիքների համար թվային տեսահսկման համակարգի մոնտաժման աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)։

Գնման առարկա են հանդիսանում՝ կոմիտեի կարիքների համար «Աշտարակ», «Թալին», «Արտաշատ», «Մասիս», «Արմավիր», «Վաղարշապատ», «Գավառ», «Սեւան», «Մարտունի», «Հրազդան», «Աբովյան», «Եղվարդ», «Չարենցավան», «Գորիս», «Կապան», «Եղեգնաձոր», «Վայք», «Ստեփանավան»», «Ալավերդի», «Վանաձոր», «Նոյեմբերյան», «Դիլիջան», «Իջեւան», «Գյումրի», «Արթիկ», «Ախուրյան» ապասարկման գրասենյակների վարչական տարածքների թվային տեսահսկման համակարգի մոնտաժման աշխատանքների կատարումը։

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից։

Թղթային ձեւով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք.Երեւան, Արշակունյաց 7 հասցեով, մինչեւ 2012 թվականի մայիսի 6-ը ժամը 11:00-ն։ Պատվիրատուն պարտավորվում է թղթային ձեւով հրավեր ստանալու պահանջ ներկայացնելու օրվա ընթացքում թղթային հրավերը անվճար տրամադրել հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին։

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք.Երեւան, Արշակունյաց 7 հասցեով, մինչեւ 2012 թվականի մայիսի 6-ը ժամը 11:00-ն եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով։

Մասնակիցների, մասնակցության իրավունքի եւ որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր։

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է՝ հայտարարությունը էլեկտրոնային ձեւով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին։

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի եւ (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում,

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի որոշումները։

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր։ Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի։ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին։

***Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ***

## Announcement

The U.S. Embassy in Yerevan, Armenia is seeking an individual for a part-time (BPA-contract) position of Farsi Language Instructor at the Embassy Language Center. Qualifications required: Fluent knowledge of Farsi, three or more years of teaching experience, RA citizenship. If interested please contact the Language Program Coordinator by May 5th, at sekoyanmv@state.gov or call (010) 49 41 78.

# Անկախ աուդիտորական եզրակացություն

**«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ**
**Խորհրդին**

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2011թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») 31 դեկտեմբերի 2011թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Մենք արտահայտել ենք դրական կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2012թ. ապրիլի 27-ի մեր աուդիտորական եզրակացությունում: Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում այն դեպքերի ազդեցությունը, որոնք տեղի են ունեցել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների դիտարկումը չի փոխարինում Բանկի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների դիտարկմանը:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հիմք ընդունելով այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 «Եզրակացության ներկայացում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ» պահանջների համաձայն:

**Եզրակացություն**

Մեր կարծիքով, Բանկի 31 դեկտեմբերի 2011թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, համապատասխանում են նշված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

*Էնդրյու Քոխսել*
*Տնօրեն*

*Տիգրան Գասպարյան*
*Աուդիտի բաժնի ղեկավար*

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
27 ապրիլի 2012թ.

**«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ**
***Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն***
***2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***

| | **2011թ. հազ. դրամ** | **2010թ. հազ. դրամ** |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտ | 14,214,299 | 10,859,565 |
| Տոկոսային ծախս | (5,490,712) | (4,572,802 ) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **8,723,587** | **6,286,763** |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ | 2,184,726 | 1,961,694 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս | (269,749) | (264,568) |
| **Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ** | **1,914,977** | **1,697,126** |
| Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից | 1,321,844 | 1,209,468 |
| Զուտ օգուտ (վնաս) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից | 19,015 | (28,811) |
| Այլ գործառնական եկամուտ | 458,138 | 375,877 |
| **Գործառնական եկամուտ** | **12,437,561** | **9,540,423** |
| Արժեզրկումից կորուստներ | (3,037,580) | (361,159) |
| Աշխատակազմի գծով ծախսեր | (3,358,545) | (3,301,688) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | (3,035,165) | (2,803,733) |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկումը** | **3,006,271** | **3,073,843** |
| Շահութահարկի գծով ծախս | (646,134) | (517,807) |
| **Տարվա շահույթ** | **2,360,137** | **2,556,036** |
| **Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի** | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | | |
| - Իրական արժեքի զուտ փոփոխություն | 94,790 | (189,064) |
| - Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն | (15,212) | 23,049 |
| Շենքերի վերագնահատում | 56,009 | - |
| **Տարվա այլ համապարփակ եկամուտ (վնաս)՝ առանց շահութահարկի** | **135,587** | **(166,015)** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | **2,495,724** | **2,390,021** |

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2012թ. ապրիլի 27-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

*Միեր Գրիգորյան*
*Վարչության նախագահ*

*Մանվել Սահակյան*
*Գլխավոր հաշվապահ*

*Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:*

**«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ**
***Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն***
***2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ***

| | **2011թ. հազ. դրամ** | **2010թ. հազ. դրամ** |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 41,520,820 | 19,922,225 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 2,590 | - |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | |
| - Բանկի կողմից պահվող | 7,472,700 | 9,523,721 |
| - Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված | 5,649,046 | 2,021,448 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 4,431,220 | 3,142,079 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 91,445,689 | 74,069,392 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 8,250,118 | 8,346,502 |
| Այլ ակտիվներ | 1,617,951 | 568,585 |
| **Ընդամենը ակտիվներ** | **160,390,134** | **117,593,952** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 59,238 | 10,342 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ | 32,197,617 | 17,272,820 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 95,235,009 | 69,987,915 |
| Ընթացիկ հարկային պարտավորություն | 181,733 | 345,794 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 605,016 | 505,058 |
| Այլ պարտավորություններ | 601,146 | 457,372 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **128,879,759** | **88,579,301** |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | |
| Բաժնետիրական կապիտալ | 13,802,404 | 13,802,404 |
| Էմիսիոն եկամուտ | 1,711,179 | 1,711,179 |
| Շենքերի վերագնահատումից աճ | 2,670,214 | 2,614,205 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | 157,840 | 78,262 |
| Չբաշխված շահույթ | 13,168,738 | 10,808,601 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **31,510,375** | **29,014,651** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | **160,390,134** | **117,593,952** |

*Միեր Գրիգորյան*
*Վարչության նախագահ*

*Մանվել Սահակյան*
*Գլխավոր հաշվապահ*

*Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:*

**«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ**
***Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն***
***2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***

| | **2011թ. հազ. դրամ** | **2010թ. հազ. դրամ** |
|---|---|---|
| ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ | | |
| Ստացված տոկոսներ | 13,825,926 | 9,567,501 |
| Վճարված տոկոսներ | (5,302,733) | (4,755,607) |
| Ստացված կոմիսիոն և այլ վճարներ | 2,258,636 | 1,961,694 |
| Վճարված կոմիսիոն և այլ վճարներ | (422,008) | (264,568) |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | 1,367,843 | 1,301,840 |
| Այլ ստացված (վճարված) եկամուտ (ծախսեր) | 473,044 | 267,792 |
| Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով մուտքեր (վճարումներ) | (5,626,735) | (5,099,139) |
| **Գործառնական ակտիվների (աճ) նվազում** | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | (1,512,641) | (1,037,397) |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | (1,402,870) | (1,923,936) |
| Հաճախորդներին տրված վարկեր | (18,211,310) | (20,500,792) |
| Այլ ակտիվներ | 110,174 | 323,912 |
| **Գործառնական պարտավորությունների աճ (նվազում)** | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ ու այլ փոխառություններ | 4,822,231 | 751,848 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 22,714,272 | (4,258,184) |
| Այլ պարտավորություններ | (9,447) | 499,893 |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ նախքան շահութահարկի վճարումը** | **13,084,382** | **(23,165,143)** |
| Վճարված շահութահարկ | (744,134) | (219,441) |
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | **12,340,248** | **(23,384,584)** |
| ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (827,570) | (211,997) |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | **(827,570)** | **(211,997)** |
| ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ | | |
| Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ վարկեր | 8,991,472 | 2,932,657 |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | **8,991,472** | **2,932,657** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)** | **20,504,150** | **(20,663,924)** |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 1,094,445 | (1,738,695) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ | 19,922,225 | 42,324,844 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | **41,520,820** | **19,922,225** |

*Միեր Գրիգորյան*
*Վարչության նախագահ*

*Մանվել Սահակյան*
*Գլխավոր հաշվապահ*

*Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:*

**«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ**
***Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն***
***2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***

| **հազ. դրամ** | **Բաժնետիրակ. կապիտալ** | **Էմիսիոն եկամուտ** | **Շենքերի վերագնահատումից աճ** | **Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատմ. պահուստ** | **Չբաշխված շահույթ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.** | **13,802,404** | **1,711,179** | **2,614,205** | **244,277** | **8,252,565** | **26,624,630** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | | | |
| Տարվա շահույթ | - | - | - | - | 2,556,036 | 2,556,036 |
| Այլ համապարփակ եկամուտ | | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի | - | - | - | (189,064) | - | (189,064) |
| Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի | - | - | - | 23,049 | - | 23,049 |
| Ընդամենը այլ համապարփակ եկամուտ | - | - | - | (166,015) | - | (166,015) |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | **-** | **-** | **-** | **(166,015)** | **2,556,036** | **2,390,021** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.** | **13,802,404** | **1,711,179** | **2,614,205** | **78,262** | **10,808,601** | **29,014,651** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2011թ. | 13,802,404 | 1,711,179 | 2,614,205 | 78,262 | 10,808,601 | 29,014,651 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | | | |
| Տարվա շահույթ | - | - | - | - | 2,360,137 | 2,360,137 |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի | - | - | - | 94,790 | - | 94,790 |
| Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի | - | - | - | (15,212) | - | (15,212) |
| Հիմնական միջոցների վերագնահատում՝ առանց շահութահարկի | - | - | 56,009 | - | - | 56,009 |
| Ընդամենը այլ համապարփակ եկամուտ | - | - | 56,009 | 79,578 | - | 135,587 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | **-** | **-** | **56,009** | **79,578** | **2,360,137** | **2,495,724** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.** | **13,802,404** | **1,711,179** | **2,670,214** | **157,840** | **13,168,738** | **31,510,375** |

*Միեր Գրիգորյան*
*Վարչության նախագահ*

*Մանվել Սահակյան*
*Գլխավոր հաշվապահ*

*Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:*

# Հովհաննես Դավթյանը Եվրոպայի փոխչեմպիոն




Չելյաբինսկում ավարտված ձյուդոյի Եվրոպայի առաջնությունում հաջող հանդես եկավ 60 կգ քաշային Հովհաննես Դավթյանը՝ դառնալով արծաթե մրցանակակիր: Հայ ձյուդոյիստը հաջողաբար հաղթելով ֆինն Յուհո Ռեյնվալին, թուրք Իսկանդեր Օզկանօղլուին, Հունաստանը ներկայացնող Բեսկիլ Շուկվանիին եւ Ուկրաինայի պատվիրակ Գեորգի Զանտարայային, մտավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում նրա մրցակիցը ռուսաստանցի Բեսլան Մուդրանովն էր: Ցավոք, հայ ձյուդոյիստին չհաջողվեց հաղթարշավը շարունակել: Պարտվելով մրցակցին, Դավթյանը դարձավ Եվրոպայի փոխչեմպիոն:

Եվրոպայի առաջնությունում դա հայ ձյուդոյիստների միակ պարգեւն էր: Անհաջող էր մեր մյուս փորձառու ձյուդոյիստ Արմեն Նազարյանի ելույթը: 66 կգ քաշային կարգում Արմենն առաջին իսկ գոտեմարտում պարտվեց վրացի Լաշա Շավդաթուաշվիլուն ու դուրս մնաց հետագա պայքարից:

Մինչեւ 81 կգ քաշային կարգում էլ Արսյոմ Բաղդասարյանը պայքարից դուրս մնաց առաջին փուլում: Նրա մրցակիցն ուկրաինացի Արտյոմ Վասիլենկոն էր: Անհաջող էր նաեւ մինչեւ 100 կգ քաշային Հակոբ Առաքելյանի ելույթը, որը եւս պայքարից դուրս մնաց առաջին փուլում՝ զիջելով լատվիացի Եվգենի Բորոդավկոյին:

Մեր երկու ձյուդոյիստուհիներն էլ ձախողվեցին: Գայանե Հարությունյանը (48 կգ) պարտվեց ֆրանսուհի Լետիսյա Պայետին, իսկ Ժաննա Ստանկեւիչը (57 կգ) զիջեց իսպանուհի Կոնսեպցիոն Բելորինիին:

# Գվարդիոլան հոգնել է «Բարսելոնից» եւ որոշել է հեռանալ



Իսպանական «Բարսելոնի» գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան մրցաշրջանի ավարտից հետո կհեռանա ակումբից: Այս մասին նա ֆուտբոլիստներին տեղեկացրել է պարապմունքի ժամանակ: Իսկ մինչ այդ նա հանդիպել էր ակումբի նախագահ Սանդրո Ռոսելի հետ: Երեք ժամ տեւած բանակցությունները արդյունք չէին տվել: Ընդ որում ակումբի ղեկավարությունը Գվարդիոլային առաջարկել էր ինքն իրեն աշխատավարձ նշանակել՝ համաձայն լինելով նույնիսկ աստղաբաշխական գումարի: Սակայն Գվարդիոլան հայտարարել էր, որ մտադիր չէ երկարաձգել պայմանագիրը:

«Մշտապես միայն կարճաժամկետ պայմանագրեր եմ կնքել, քանի որ «Բարսելոնի» ղեկավարության պահանջները շատ բարձր են: Մենք պարտվեցինք երկու մրցաշարում: Այնպես որ սա լավագույն պահն է, որպեսզի հայտարարեմ ակումբից հեռանալու մասին: Պատճառը պարզ է: 4 տարի «Բարսելոնի» գլխավոր մարզչի պաշտոնում գտնվելը մի ամբողջ հավերժություն է թվում: 4 տարում շատ եմ հոգնել: Նոր մարզիչը թիմին կտա այն, ինչ ես այլեւս տալ չեմ կարող: Համոզված եմ, որ ճիշտ եմ վարվում: Ինձ ժամանակ է հարկավոր, որպեսզի նույն խանդավառությամբ համակվեմ, ինչպես «Բարսելոնում» աշխատանքի առաջին տարում», նշել է Խոսեպ Գվարդիոլան:

Անվանի մարզիչը «Բարսելոնի» ղեկը ստանձնեց 2008-ին: Առաջին իսկ տարում նրա գլխավորությամբ թիմը նվաճեց երկրի չեմպիոնի տիտղոսը, Իսպանիայի գավաթն ու չեմպիոնների գավաթը: Ընդ որում թիմը հարձակողական դիտարժան ֆուտբոլ ցուցադրեց: Հաջորդ տարիներին նրա օրոք «Բարսելոնը» եւս 2 անգամ դարձավ Իսպանիայի չեմպիոն, 3 անգամ նվաճեց երկրի Սուպերգավաթը, 2 անգամ՝ ՈՒԵՖԱ-ի Սուպերգավաթը, նույնքան անգամ արժանացավ աշխարհի թիմային առաջնության չեմպիոնի տիտղոսին, հաղթող ճանաչվեց չեմպիոնների լիգայում: Այսպիսով, Գվարդիոլայի օրոք «Բարսելոնը» 13 տիտղոսների է արժանացել:

Ընթացիկ մրցաշրջանն ամենաանհաջողն էր Խոսեպ Գվարդիոլայի համար: Չեմպիոնների լիգայի գավաթակիրը պայքարից դուրս մնաց կիսաեզրափակիչում՝ զիջելով Լոնդոնի «Չելսիին» (0-1, 2-2): Իսկ երկրի առաջնությունում պարտվելով «Ռեալին», գործնականում «Բարսելոնը» զրկվեց չեմպիոնի տիտղոսը նվաճելու հնարավորությունից: Առաջնության ավարտից 4 տուր առաջ «Ռեալը» 7 միավորով գերազանցում է «Բարսելոնին»:

Լրատվամիջոցներն ակտիվորեն քննարկում էին, թե ով է փոխարինելու Գվարդիոլային: Իսպանական լրատվամիջոցները հավանական էին համարում Ֆրանսիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Լորան Բլանի կամ էլ իտալական «Աթլետիկոյի» ղեկին գտնվող Մարսելո Բիելսայի թեկնածությունը: Գլխավոր մարզչի թեկնածուների թվում նշվում էին նաեւ Լուիս Էնրիկեն («Ռոմա»), Էռնեստո Վալվերդեն («Օլիմպիակոս»), Յոահիմ Լյովը (Գերմանիայի հավաքական), Անդրե Վիլաշ-Բոաշը («Չելսիի» նախկին գլխավոր մարզիչ):

Սակայն «Բարսելոնի» ղեկավարությունն արդեն կատարել է իր ընտրությունը: Թիմը հաջորդ մրցաշրջանում կգլխավորի Գվարդիոլայի օգնական, 42-ամյա Տիտո Վիլանովան: Նա թիմում աշխատում է դեռեւս 2007-ից, երբ Գվարդիոլան գլխավորում էր «Բարսելոնի» 2-րդ թիմը: 2008-ին երկու մասնագետներին էլ առաջարկվեց գլխավորել հիմնական թիմը: Այնպես որ վերջին 5 տարիներին Վիլանովան Գվարդիոլայի օգնականն էր:

Ինչ վերաբերում է Գվարդիոլայի հետագա ճակատագրին, ապա լրատվամիջոցները հավանական են համարում «Չելսիի», «Ինտերի» կամ Անգլիայի ազգային հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնի ստանձնումը: Ընդ որում դեռեւս մարտին Ռոման Աբրամովիչը պատրաստ էր Գվարդիոլային դարձնելու աշխարհի ամենաբարձր վարձատրվող մարզիչը՝ «Չելսիում» 4 տարվա աշխատանքի համար առաջարկելով 40 մլն ֆունտ ստեռլինգ «մաքուր» աշխատավարձ: Ճիշտ է, Գվարդիոլան ներկայումս մտադիր է հանգստանալ մարզչական լարված աշխատանքից եւ առայժմ ոչ մի առաջարկ չի պատրաստվում քննարկել:

# Գարիկ Հարությունյանը բրոնզե մեդալակիր

**Սանկտ Պետերբուրգում ավարտված ձյուդոյի մինչեւ 20 տարեկանների Եվրոպայի գավաթի խաղարկությունում տասնմի դուրս եկած Հայաստանի 9 պատվիրակներից մրցանակակիր դարձավ միայն Գարիկ Հարությունյանը: Մինչեւ 55 կգ քաշային կարգում նա արժանացավ բրոնզե մեդալի:**

**Գարիկը հասավ մինչեւ քառորդ եզրափակիչ, որտեղ պարտվեց ռուսաստանցի Մաքսիմ Կոբելյանսկուն: Սակայն քանի որ վերջինս մտել էր եզրափակիչ, հայ ձյուդոյիստն իրավունք ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար: Այդ պայքարում նա նախ հաղթեց Ղազախստանի եւ Բելառուսի ներկայացուցիչներին, ապա վճռորոշ գոտեմարտում պարտության մատնեց ռուսաստանցի Ալեքսանդր Գոլովկոյին:**

**ՇԱԽՄԱՏ**

# Արոնյանն ու Կրամնիկը բաժանվեցին խաղաղությամբ

**Ցյուրիխում երեկ ավարտվեց Լեւոն Արոնյանի եւ Վլադիմիր Կրամնիկի 6 պարտիայից բաղկացած դասական շախմատի ընկերական մրցախաղը: Գրանցվեց ոչ-ոքի: Մրցակիցներից յուրաքանչյուրը շահեց 1 պարտիա, մնացած 4 մրցախաղերում հաշտություն կնքվեց: Արոնյանը հաղթել էր մեկնարկային տուրում սեւ խաղաքարերով, իսկ Կրամնիկը սպիտակներով երրորդ պարտիայում վերականգնել էր հավասարակշռությունը: Հետաքրքրական է, որ վերջին երկու պարտիաներն էլ ոչ-ոքի են ավարտվել միեւնույն՝ 43-րդ քայլին:**

**Բացի դասական շախմատի 6 պարտիաներից, Արոնյանն ու Կրամնիկը անցկացրին արագ շախմատի մեկ հանդիպում, որում սեւ խաղաքարերով խաղացող հայ շախմատիստը հաղթանակ տոնեց: Սակայն այդ արդյունքը, մրցակարգի համաձայն, ընդհանուր հաշվի մեջ չգրանցվեց:**

# Սերգեյ Մովսիսյանը Չեխիայի փոխչեմպիոն

**Չեխիայի Պարդուբիցե քաղաքում բնակվող Սերգեյ Մովսիսյանը շարունակում է տարբեր երկրների շախմատի ակումբային առաջնություններում մրցանակների արժանանալ: Հիշեցնենք, որ վերջերս նա Ռուսաստանի շախմատի թիմային առաջնությունում Սանկտ Պետերբուրգի շախմատի ֆեդերացիայի թիմի կազմում դարձել էր փոխչեմպիոն: Մի քանի օր անց Մովսիսյանը «Բադեն-Բադենի» կազմում հռչակվեց Գերմանիայի Բունդեսլիգայի առաջնության հաղթող:**

**Եվ ահա հայ շախմատիստը նոր հաջողության հասավ Չեխիայի առաջնությունում: Հանդես գալով հարազատ քաղաքի «Պարդուբիցե»-ի «Ռապիդում», Մովսիսյանը թիմի կազմում արժանացավ արծաթե մեդալի: «Ռապիդը» տոնեց 9 հաղթանակ, 2 հանդիպում ավարտեց ոչ-ոքի եւ թիմային 29 միավորով գրավեց 2-րդ տեղը: Նույնքան միավոր էր հավաքել նաեւ երկրի չեմպիոն հռչակված «Նովոսիբիրսկը», որը «Ռապիդին» գերազանցեց բոլոր պարտիաներում վաստակած միավորների ընդհանուր քանակով: Սերգեյ Մովսիսյանը թիմի առաջատարն էր ու խաղում էր առաջին խաղատախտակի վրա: Նա 9 հնարավորից 4 միավոր վաստակեց:**

# Մուրթազալիեւը շատ մոտ էր օլիմպիական ուղեգրին

**Չինաստանի Տայյուան քաղաքում ավարտվեց ըմբշամարտի օլիմպիական համաշխարհային վարկանիշային մրցաշարը, որտեղ քաշային յուրաքանչյուր կարգում խաղարկվում էր Լոնդոնի օլիմպիադայի 3-ական ուղեգիր: Քանի որ Հայաստանի ազատ եւ հունահռոմեական ոճի ըմբիշներն արդեն 3-ական ուղեգիր են նվաճել, ուստի Չինաստանում հանդես եկան միայն քաշային այն 4 կարգերում, որում դեռեւս մեր երկիրը ներկայացուցիչ չունի օլիմպիադայում:**

**Առաջինը մրցապարտեզ դուրս եկան ազատոճային ըմբիշները: Մեր ըմբիշներից օլիմպիական ուղեգրի նվաճմանը շատ մոտ էր 74 կգ քաշային Մուսա Մուրթազալիեւը: Առաջին գոտեմարտում նա հաղթեց ռումինացի Մարիուս Աստֆանիին, իսկ ապա հունգարացի Գաբոր Հատոշի հետ մրցավեճում պարտություն կրեց: Քանի որ հունգարացի ըմբիշը հասավ մինչեւ եզրափակիչ, Մուրթազալիեւն իրավունք ստացավ պայքարելու բրոնզե մեդալի եւ օլիմպիական ուղեգրի համար: Ցավոք, մեր ըմբիշը միայն առաջին խնդիրը հաջողությամբ լուծեց: Պարտության մատնելով Ուկրաինան ներկայացնող Գիյա Չիխլաձեին եւ Ղրղզստանի ներկայացուցիչ Բատոր Բազարովին, Մուրթազալիեւն արժանացավ բրոնզե մեդալի: Օլիմպիական ուղեգրի համար պայքարում նա գոտեմարտեց բրոնզե մյուս մեդալակրի՝ չինացի Ժան Չոնյաոնի հետ: Հաղթեց չինացին, որն էլ իրավունք ստացավ հանդես գալու Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերում:**

**Անհաջող էին Արթուր Բաղդասարյանի (60 կգ) եւ Էդգար Ենոքյանի (96 կգ) ելույթները, որոնք պարտվեցին առաջին գոտեմարտերում ու դուրս մնացին հետագա պայքարից: Արթուրը զիջեց չինացի Ֆենգ Գաոյին, իսկ Էդգարը պարտվեց բուլղարացի Գեորգի Սրեդկովին: Ռուսլան Բասիեւն էլ հասնելով քառորդ եզրափակիչ, պարտվեց կորեացի ըմբիշին:**

**Ուղեգիր նվաճել չհաջողվեց նաեւ հունահռոմեական ոճի մեր 4 ըմբիշներից եւ ոչ մեկին: Առավել հաջող էր Արամ Ջուլֆալակյանի (66 կգ) ելույթը, որն իրավունք էր ստացել պայքարելու բրոնզե մեդալի համար: Սակայն Ուկրաինան ներկայացնող Արմեն Վարդանյանի հետ գոտեմարտում Արամին տեխնիկական պարտություն գրանցվեց: Անհաջողության մատնվեցին նաեւ Ռոբերտ Կիրակոսյանը (55 կգ), Արթուր Մկրտչյանը (60 կգ) եւ Տիգրան Ասատրյանը (84 կգ):**

**Մեր անվանի ըմբիշ, Բուլղարիան ներկայացնող օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Արմեն Նազարյանը վերսկսել է մարզումները եւ մտադիր է մասնակցել Լոնդոնի օլիմպիադային: Սակայն վնասվածքի պատճառով նա չի մասնակցում Չինաստանի մրցաշարին:**

# «Միկայի» հաղթարշավն ընդհատվեց

**Երեկ ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 6-րդ տուրի հանդիպումների օրն էր: Քանի որ այսօր Գյումրիում «Շիրակն» ու «Իմպուլսը» վիճարկելու են Հայաստանի գավաթը, ուստի նրանց մասնակցությամբ հանդիպումները հետաձգվել են: Այնպես որ երեկ կայացավ միայն 2 խաղ: «Հանրապետական» մարզադաշտում «Փյունիկը» հյուրընկալել էր «Միկային», որը մինչ այդ 4 անընդմեջ հաղթանակ էր տոնել: Հորդառատ անձրեւի ուղեկցությամբ ընթացած խաղը գոլային պահերով հարուստ չէր: Առաջին խաղակեսում հիշարժան էր «Փյունիկի» ավագ Սարգիս Հովսեփյանի տուգանային հարվածը, որից հետո Կասպարովը դժվարությամբ կասեցրեց գնդակը: Ընդմիջումից հետո էլ թիմերը մեկական վտանգավոր պահ ստեղծեցին, սակայն Ղուկաս Պողոսյանի եւ Սեմյոն Մուրադյանի հարվածներից հետո հաջող խաղացին դարպասապահները:**

**Դարպասները այդպես էլ մնացին անառիկ: «Միկայի» հաղթարշավը թեեւ կասեցվեց, սակայն թիմը 13 միավորով միանձնյա շարունակում է գլխավորել աղյուսակը:**

**Տուրի մյուս խաղում «Բանանցը» հյուրընկալել էր «Արարատին»: Դաշտի տերերը հաղթեցին 2-0 հաշվով: 49-րդ րոպեին նախկին արարատցի Գեւորգ Կարապետյանը բացեց հաշիվը, իսկ քիչ անց Հովհաննես Համբարձումյանը 2-րդ գնդակը խփեց:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Անկախ աուդիտորական եզրակացություն

**«ՌԱՍԿՈ» Ապահովագրական ՍՊԸ**
**Տնօրենների խորհրդին**

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2011 թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները եւ համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «ՌԱՍԿՈ» Ապահովագրական ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») 31 դեկտեմբերի 2011 թ. դրությամբ եւ այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետուությունների հիման վրա: Մենք արտահայտել ենք դրական կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2012 թ. ապրիլի 27-ի մեր աուդիտորական եզրակացությունում: Այդ ֆինանսական հաշվետվությունները եւ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում այն դեպքերի ազդեցությունը, որոնք տեղի են ունեցել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետեւաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների դիտարկումը չի փոխարինում Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների դիտարկմանը:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հիմք ընդունելով այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 «Եզրակացության ներկայացում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ» պահանջների համաձայն:

**Եզրակացություն**

Մեր կարծիքով, Ընկերության 31 դեկտեմբերի 2011 թ. դրությամբ եւ այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, համապատասխանում են նշված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

**Հանգամանքների շարադրում**

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ Ընկերության 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ եւ այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների 2012 թ. ապրիլի 27-ի մեր աուդիտորական եզրակացությունը ներառում է «Հանգամանքների շարադրում» պարբերությունը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված համադրելի տվյալների վերահաշվարկին, ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 26-ում:

*Տնօրեն՝* *ԷՆԴՐՅՈՒ ՔՈՔՍՇԵԼ*
*Աուդիտի բաժնի ղեկավար՝* *ՏԻԳՐԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
KPMG Armenia cjsc
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
27 ապրիլի, 2012 թ.

**«ՌԱՍԿՈ» Ապահովագրական ՍՊԸ**
***Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն***
***2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***

| հազար դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| Համախառն ապահովագրավճարներ | 1,203,383 | 221,434 |
| Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ | (79,582) | (87,368) |
| **Զուտ ապահովագրավճարներ** | **1,123,801** | **134,066** |
| Չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխություն | (174,868) | 14,113 |
| Վերաապահովագրողների բաժինը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում | (5,118) | (1,612) |
| **Զուտ վաստակած ապահովագրավճարներ** | **943,815** | **146,567** |
| Մարված պահանջներ՝ առանց վերաապահովագրության | (291,613) | (28,381) |
| Ապահովագրության պայմանագրերի պահուստների փոփոխություն | (59,114) | 45,087 |
| **Զուտ պահանջներ** | **(350,727)** | **16,706** |
| Ձեռքբերման ծախսումներ | (130,192) | (13,216) |
| Զուտ եկամուտ միջնորդավճարների տեսքով վերաապահովագրությունից | 3,880 | 167 |
| Ապահովագրական գործունեության արդյունքները | 466,776 | 150,224 |
| Ֆինանսական եկամուտ | 276,434 | 142,905 |
| Ֆինանսական ծախս | (1,307) | (67,821) |
| Այլ եկամուտ | 9,849 | 6,667 |
| Վարչական ծախսեր | (364,394) | (191,318) |
| Արժեզրկումից կորուստներ | (16,412) | (9,856) |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկումը** | **370,946** | **30,801** |
| Շահութահարկի գծով ծախս | (58,003) | (21,449) |
| **Զուտ շահույթ տարվա համար** | **312,943** | **9,352** |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստի փոփոխություն՝ առանց հարկերի | 113 | - |
| **Ընդամենը այլ համապարփակ եկամուտ տարվա համար** | **313,056** | **9,352** |

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2012թ. ապրիլի 27-ին:

***Հովհաննես Գալստյան*** ***Ժասմեն Մինասյան***
***Գլխավոր տնօրեն*** ***Գլխավոր հաշվապահ***

*Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:*

**«ՌԱՍԿՈ» Ապահովագրական ՍՊԸ**
***Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն***
***2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ***

| հազար դրամ | 2011թ. | 2010թ. Վերահաշվարկված |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 29,554 | 30,448 |
| Այլ ակտիվներ | 28,105 | 8,030 |
| Կանխավճարներ շահութահարկի գծով | - | 24,796 |
| Հետաձգված ձեռքբերման ծախսումներ | 86,136 | 72,391 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 81,377 | - |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքներ | - | 99,598 |
| Վերաապահովագրողների բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստներում | 53,385 | 162,953 |
| Վերաապահովագրության և ապահովագրության գծով ստացվելիք գումարներ | 228,747 | 109,892 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 2,245,658 | 1,807,974 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 44,746 | 122,128 |
| **Ընդամենը ակտիվներ** | **2,797,708** | **2,438,210** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | |
| **Պարտավորություններ** | | |
| Ապահովագրության պայմանագրերի պահուստներ | 359,910 | 230,378 |
| Վերաապահովագրության և ապահովագրության գծով վճարվելիք գումարներ | 53,926 | 81,004 |
| Որպես կանխավճար ստացված ապահովագրավճարներ | 414,766 | 506,248 |
| Այլ պարտավորություններ | 45,301 | 27,969 |
| Ընթացիկ հարկային պարտավորություն | 6,681 | - |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 22,999 | 11,542 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **903,583** | **857,141** |
| **Սեփական կապիտալ** | | |
| Բաժնետիրական կապիտալ | 968,000 | 968,000 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | 113 | - |
| Չբաշխված շահույթ | 926,012 | 613,069 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **1,894,125** | **1,581,069** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | **2,797,708** | **2,438,210** |

***Հովհաննես Գալստյան*** ***Ժասմեն Մինասյան***
***Գլխավոր տնօրեն*** ***Գլխավոր հաշվապահ***

*Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:*

**«ՌԱՍԿՈ» Ապահովագրական ՍՊԸ**
***Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն***
***2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***

| հազար դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ | | |
| Ապահովագրության գծով ստացված ապահովագրավճարներ | 977,023 | 586,351 |
| Վերաապահովագրության գծով վճարված ապահովագրավճարներ | (94,287) | (62,358) |
| Վճարված պահանջներ և օգուտներ | (299,739) | (29,835) |
| Ձեռքբերման ծախսումներ | (158,062) | (11,363) |
| Տոկոսային եկամուտ | 182,189 | 135,223 |
| Տոկոսային ծախս | (1,307) | - |
| Վարչական ծախսեր | (326,206) | (189,735) |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | |
| Այլ ակտիվներ | (2,919) | 2,697 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | (340,401) | (299,797) |
| Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում) | | |
| Այլ պարտավորություններ | (96) | (6,724) |
| **Գործառնական գործունեությամբ (օգտագործված)/ ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան հարկերի վճարումը** | **(63,805)** | **124,459** |
| Վճարված շահութահարկ | (15,098) | (37,638) |
| **Գործառնական գործունեությամբ (օգտագործված)/ ստացված դրամական միջոցների հոսքեր** | **(78,903)** | **86,821** |
| ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ | | |
| Մուտքեր/(ձեռքբերումներ) մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքների գծով | 100,000 | (3,809) |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերում | (81,510) | - |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ | (16,258) | (22,214) |
| **Ներդրումային գործունեությունից ստացված/ (օգտագործված) դրամական միջոցների հոսքեր** | **2,232** | **(26,023)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | **(76,671)** | **60,798** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (711) | (474) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | 122,128 | 61,804 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | **44,746** | **122,128** |

***Հովհաննես Գալստյան*** ***Ժասմեն Մինասյան***
***Գլխավոր տնօրեն*** ***Գլխավոր հաշվապահ***

*Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:*

**«ՌԱՍԿՈ» Ապահովագրական ՍՊԸ**
***Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն***
***2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***

| հազ. դրամ | Բաժնետիրական կապիտալ | Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատմ. պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|
| **Մնացորդն առ 1 հունվարի 2010թ.** | **968,000** | **-** | **603,717** | **1,571,717** |
| Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար | - | - | 9,352 | 9,352 |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2010թ.** | **968,000** | **-** | **613,069** | **1,581,069** |
| Մնացորդն առ 1 հունվարի 2011թ. | 968,000 | - | 613,069 | 1,581,069 |
| Շահույթ տարվա համար | - | - | 312,943 | 312,943 |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատում՝ առանց 29 հազար դրամ հետաձգված հարկի | - | 113 | - | 113 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | **-** | **113** | **312,943** | **313,056** |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2011թ.** | **968,000** | **113** | **926,012** | **1,894,125** |

***Հովհաննես Գալստյան*** ***Ժասմեն Մինասյան***
***Գլխավոր տնօրեն*** ***Գլխավոր հաշվապահ***

*Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:*

**«ՌԱՍԿՈ» Ապահովագրական ՍՊԸ**
***2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա***
***ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն***

***1* Պատրաստման հիմունքներ**

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «ՌԱՍԿՈ» Ապահովագրական ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերության») 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2012թ. ապրիլի 27-ին: Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2011թ. և հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք վերցվել են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների 5-ից 8-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել ըստ պահանջի Ընկերության գլխամասային գրասենյակից (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0001, Թումանյան փ. 8) և հասանելի են Ընկերության պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ www.rasco.am հասցեով:

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 28.4.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: